Azg
armenian daily
26 ՕԳՈՍՏՈՍ 1994 ՈՒՐԲԱԹ # 163 (666)

Երուսաղեմի Թորգոմ Պատրիարքն ընտրվեց կաթողիկոսական տեղապահ

«Այս ընտրությունը միայն ծանր պարականություն է դնում ինձ վրա», երեկ ուշ երեկոյան Ս. Էջմիածնի Եպիսկոպոսաց ժողովի եւ Գերագույն Հոգեւոր Խորհրդի ժամեր տեւած նիստից հետո հայտարարեց Երուսաղեմի պատրիարք Թորգոմ Արքեպիսկոպոս Մանուկյանը, որը ձայների մեծամասնությամբ առաջիկա 6-12 ամիսների համար ընտրվեց կաթողիկոսական տեղապահ: Առաջարկված թեկնածուների մեջ էին նաեւ Ա. Բարեպաշտության թեմի առաջնորդական փոխանորդ Գարեգին Արքեպիսկոպոս Ներսիսյանը, որը երկրորդն էր իր հավաքած ձայներով, Ս. Էջմիածնի դիվանապետ Ներսես Արքեպիսկոպոս Պողոսյանը, Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ Արքեպիսկոպոս Մարտիրոսյանը եւ Շիրակի թեմի առաջնորդ Գրիգորիս Արքեպիսկոպոս Բալնիանը: Ոսկան Արքեպիսկոպոս Գալֆայանը հայտնեց, թե ժողովի ընթացքում արտահայտվեցին տարբեր կարծիքներ թեկնածուների ընտրության շուրջ: Էջմիածնական այլ աղբյուրներից մեզ հայտնի դարձավ, որ առաջադրված 5 թեկնածուներից 3-ը անցան երկրորդ փուլ, որից հետո 38 ձայներից 16-ը հավաքեց Գարեգին Արքեպիսկոպոս Ներսիսյանը, 20-ը՝ Թորգոմ Արքեպիսկոպոս Մանուկյանը, որն էլ դարձավ տեղապահ: Նրա հիմնական պարականությունն է լինելու առաջիկա կաթողիկոսական ընտրությունների կազմակերպումը:

Հ.Ա., Ս. Էջմիածին

ՀԱՆԳԻՍՏ ՎԱԶԳԵՆ Ա-Ի

Ցավակցական նամակներ

Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ի մահվան կապակցությամբ իրենց ցավակցությունն են հայտնում Ռամկավար ազատական կուսակցության կենտրոնական վարչությունը եւ Թեհրանի Մշակութային Միության Միացյալ Նահանգների ու Կանադայի կենտրոնական վարչությունը:

Ռամկավար Ազատական Կուսակցության Կեդրոնական Վարչությունը արձագանգը հանդիսանալով համաժիողովեան մեր անդամակցությանն, այսու խորագաց ցաւակցութիւններ կը յայտնէ Ն.Ս.Օ.Տ. Վազգէն Ա. Ամենայն Հայոց Հայրապետին անժամանակ վախճանման տխուր առթիւ:

Համայն հայութեան հետ կը սգայ նաեւ Ռամկավար Ազատական Կուսակցութեան մեծ ընտանիքը: Վազգէն Ա. Կաթողիկոսի հաստատամեայ գահակալութիւնը յատկանշուեցաւ պատմական աննախընթաց վերելքովը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, եւ պայծառացումը Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան վարկին եւ հմայքին, Մայր Աթոռը դարձնելով համայն հայութեան հոգեւոր կեանքին ու ոգեղէն ժառանգութեան կիզակէտը: Շնորհիւ Վազգէն Ա. Հայրապետի իմաստուն առաջնորդութեան, եւ հակառակ Հայոց Առաքելական եկեղեցւոյ ծոցին մէջ ծագած անքաւորողակողմ շարժումներուն, ամրացաւ Ս. Էջմիածինի հոգեւոր եւ ազգային հեղինակութիւնը թէ՛ Մայր հայրենիքն ներս, թէ՛ Ափիւռքի տարածքին, եւ թէ՛ միջազգային էքումենիք եւ հասարակական կարծիքի ծիրին մէջ:

Վազգէն Առաջին Վեհափառ Հօր վախճանումով հայ ժողովուրդը կը կորսնցնէ ոչ միայն իր հոգեւոր առաջնորդը, այլ ազգապահը, որ խորհրդային Հայաստանի շրջանին եւ անկէ վերջ, մեզի ներշնչեց ուժ, ապրելու կամք եւ յարատեւելու յոյս:

Թող Իր հոգին յաւիտեան անբէջ մնայ մեր մէջ:

Ռամկավար Ազատական Կուսակցութեան Կեդրոնական Վարչութիւն
Դոկտ. ԱՐՇԱՒԻՐ ԿԷՈՆՔԵԱՆ
Ատենապետ

Թէհրանի Մշակութային Միութեան Միացեալ Նահանգներու եւ Կանադայի Կեդրոնական Վարչութիւնը եւ համայն անդամակցութիւնը սրտաբեկ վշտակցութիւն կը յայտնեն Ն.Ս.Օ.Տ. Ամենայն հայոց Կաթողիկոս Վազգէն Ա. Հայրապետին վախճանման տխուր առիթով:

Կը սգանք մեզմէ բաժանումը հայոց Հայրապետին, որ իր կենդանութեան իսկ դարձած էր մեր եկեղեցական եւ ազգային պատմութեան լուսաւոր էջը: Վազգէն Ա. Վեհափառը ամրացուց պատմական գահը Լուսաւորչի, աղաւաղեց եւ տարածեց փայլը Ս. Էջմիածնի՝ զայն դարձնելով հաւատի եւ յոյսի բեւեռ ամբողջ հայութեան, եղաւ շինարար Կաթողիկոս վերականգնելով մեր պատմական վանքերն ու յուշարձանները: Վազգէն Ա. Հայրապետին վախճանումով հայ ժողովուրդը կորսնցուց ոչ միայն իր հոգեւոր հայրը, այլ նաեւ ազգային տեսիլք ունեցող հեռատես, խաղաղարար եւ իմաստուն առաջնորդ մը, որ շուրջ չորս տասնամեակ ներշնչեց յոյս եւ հաւատ:

Կը մնանք սգակից՝

ԹԷՀԵԱՆ Մշակութային Միութեան
Միացեալ Նահանգներու ու Կանադայի Կեդրոնական Վարչութիւն
Դոկտ. ԳԷՈՐԳ ՔԵՇԻՇԵԱՆ
Ատենապետ
Դոկտ. ՆՈՒՊԱՐ ՊԷՐՊԷՐԵԱՆ
Ատենադպիր

ԱՅՑԳԱՅԻՆ

Հոգեհանգիստ Վեհափառին

Մի խանի օր եւս եւ մենք կզրկվենք բիբլիական Հայոց Հայրապետի բարի տեսությունից

Վերաշնորհ Գարեգին արք. Ներսիսյանի ազդ խոսքը

Երեկ, հինգշաբթի, ըստ նախապես ազդարարված ծրագրի, առավոտյան ժամը 9.10-ին Վեհափառի աճյունը անդաստան կերոով Ս. Էջմիածին փոխադրելուց եւ զգեստավորելուց հետո, Վեհարանում տեղի ունեցավ հուղարկավորության Տաճարգը, որից հետո, ժամը 11:50-ին, դարձյալ անդաստան կերոով աճյունը տեղափոխվեց Երեւանի Առաքելական թեմի Ս. Սարգիս առաջնորդանիստ եկեղեցի, որտեղ արդեն հսկա բազմություն էր հավաքվել՝ ծեր ու երիտասարդ, կին ու տղամարդ, նույնիսկ երեխաներ, շատերի ձեռքին ծաղիկներ, շատերի աչքին արցունքի կայլակներ: Վեհափառի աճյունն ամփոփող դագաղը սկսած Հաղբատակի կամրջից, Երուսաղեմի եւ Կ. Պոլսի Հայոց Պատրիարքների, եպիսկոպոսների, վարդապետների, քահանաների առաջնորդությամբ եւ ծովածավալ ժողովրդի ուղեկցությամբ, բարձր կոչված, «Այսօր ժողովեալ արբոյն ի միասին» շարականի երգեցողությամբ տարվեց եկեղեցի, որ եւ կատարվեց հոգեհանգստի ոգեւորն: Օրվա հանդիսապետն էր Երուսաղեմի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանը: Դագաղին հետեւում էին ՀՀ փոխնախագահ Գագիկ Հարությունյանի գլխավորությամբ՝ ոտնախարար Արմենակ

Ղազարյանը, ներքգործնախարար Վանիկ Միրզոյանը, ոչնչական այլ դեմքեր, պատգամավոր բարեւներ Հրայր Հովնանյանը, Ջորջ Քյուրքջյանը, բանաստեղծ Սիլվա Կապուտիկյանը, հյուրեր, ներկայացուցչական դեմքեր՝ տարբեր կազմակերպություններից եւ հասարակություններից:

Եկեղեցում կատարվեց հոգեհանգստյան արարողություն «Ի վերին երանելեաց»-ով, ապա Գարեգին Արքեպիսկոպոս Ներսիսյանը, «Հոգեւոր հանգիստ տուր հոգեւոր հանգիստ տուր Քեզ, Տեր» ոգեցնցիչ մեր շարականների հնչյունների ներքո: Սգո խոսք արտասանեց Արարատյան Հայրապետական թեմի Առաջնորդական փոխանորդ՝ Գերաշնորհ Գարեգին արք. Ներսիսյանը:

Տես # էջ 2

ԴԱՐԱԲԱՂԻ ՀԱՐԻՑ

Ադրբեջանը պահանջում է Շուշին եւ Լաչինը

ԲԱՔՈՒ, 25 ՕԳՈՍՏՈՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Ադրբեջանի մայրաքաղաքում դիտորդներ ենթադրում են, որ Ղարաբաղի հակամարտության կարգավորման մոսկովյան բանակցությունների հաջող փուլին հավանաբար կմասնակցի նաեւ ԵԱՀԽ Մինսկի խմբի ներկայացուցիչը: Այդ դեպքում կարող կմեծանա մոտ ժամանակներս սահմանափակ փուլ տարբերի ստորագրման հնարավորությունը: Իսկ առայժմ ադրբեջանցի դիվանագետներն առանձնապես լավատես չեն քաղաքական մեծ համաձայնագրի ստորագրման հեռանկարի առնչությամբ: Բաքվում երկյուղներ ունեն, թե Երեւանը եւ Ստեփանակերտը չեն համաձայնվի խելամիտ փոխզիջման դիմել ադրբեջանական Լաչին եւ Շուշի քաղաքների կարգավիճակի հարցում: Ադրբեջանը հայկական կողմին առաջարկում է զորքերն անհապաղ դուրս բերել այդ երջաններից, որոնցով դրանք անցնեն Բաքվի վերահսկողության տակ: Ըստ որում Հայաստանը Լեռնային Ղարաբաղին կարող միջանցքով հանձնվում է ԵԱՀԽ-ի վերահսկողությանը: Խնդրի լուծման նկատմամբ Ադրբեջանի նման մոտեցումն ըմբռնում է գտնում ԵԱՀԽ Մինսկի խմբի կողմից: Յան Էլիասոնն ըստ երեւույթին հայկական կողմին կվստահի համոզել ընդունելու ադրբեջանական կողմի այդ առաջարկությունը: Այդուհանդերձ հիշ հույս կա, թե Հայաստանը եւ Լեռնային Ղարաբաղը զիջումների կդիմեն: Վերջերս Մոսկվայում ավարտված բանակցություններում հայկական կողմը հայտարարեց, որ գրավյալ երջաններից, այդ թվում Լաչինից եւ Շուշիից զորքերը կարող են դուրս բերվել լոկ այն բանից հետո, երբ կաղամավվի Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության անվտանգությունը: Դատելով ըստ ամենայնի, Հայաստանի խորհրդարանի նախագահ Բաբկեն Արարքցյանի լավատեսական այն կանխատեսումը, թե սահմանափակ դադարագիրը կստորագրվի օգոստոսի 30-ին, չի իրականանա: Երեւանը Ռուսաստանի միջնորդ, հատուկ հանձնարարություններ դեսպան Վլադիմիր Կազիմիրովին խնդրել է հեռաձգել մոսկովյան բանակցությունների հերթական փուլը, ինչը կապված է Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ի մահվան հետ:

■ *Ջոնար Դուդաեւին ընդդիմադիր շարժման անդամները, որը գլխավորում է Ռուզան Խասբուլատովը, չեղյալ հայտարարեցին օգոստոսի 25-ին նախաստեղված արտավանը դեռի Գրոզնի: Այդ մասին Տոյստոյ-Յուրտ գյուղում հաղորդեց իմը Ռուսաստանի Գերագույն խորհրդի նախկին նախագահը: Այդ որոշումը պատճառաբանվում է Դուդաեւի կողմնակիցների հետ «զինված ընդհարումից խուսափելու» ցանկությամբ: Գրոզնուց ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի թղթակցի ստած հաղորդումների համաձայն, ներկայիս իշխանությունների հավատարիմ ուժերը հաստատեն պատճառանել են Չեչնիայի մայրաքաղաքը: Միայն մեկ կողմից՝ Ռուսով-Բաթու ավտոխճուղուց դադարի մուտի մոտ երեք օրվա 10 տանկ ու թնդանոթ էին կենտրոնացվել:*

ՍՈՒՆԵՆՊԵՍ

Զորքերի դուրսբերման առթիվ Ելցինը կայցելի Գերմանիա

ՄՈՍԿՎԱ, 25 ՕԳՈՍՏՈՍ, ԻՏԱՌ-ՏԱՍՍ ԱՐՄԵՆՊՐԵՍ: Արեւմտյան զորախմբի դուրսբերման արարողության առթիվ Ռուսաստանի նախագահ Բորիս Ելցինի օգոստոսի 30-31-ը Գերմանիա կատարելիք ուղեւորությունը նոր խրան կտա ռուս-գերմանական հարաբերություններին եւ կծառայի երկու երկրների փոխգործակցության ամրապնդմանը նրանց նոր փուլում, նշում են դիտորդները: Նախնական ծրագրի համաձայն, Ռուսաստանի ղեկավարը Գերմանիայի մայրաքաղաք կժամանի օգոստոսի 30-ի երեկոյան: Հաջորդ օրը նա հանդիպում կունենա Գերմանիայի դաշնակցային կանցլեր Հելմուտ Քոլի հետ: Ըստ նախնական ծրագրի, նախատեսվում է Ռուսաստանի նախագահ Բորիս Ելցինի հանդիպումը իր գերմանացի պաշտոնակից Ռոման Հերցոգի հետ:

ՀԱՍԱՑԱՐԱԿ

Խոլերա. 677 հիվանդ, 15 մահ Դաղստանում

ՄՈՍԿՎԱ, 25 ՕԳՈՍՏՈՍ, ԻՏԱՌ-ՏԱՍՍ ԱՐՄԵՆՊՐԵՍ: Երեկ Դաղստանում խոլերայով հիվանդացավ 22 մարդ, մահացածներ չկան: Համաճարակի սկզբից գրանցվել է ընդամենը 677 հիվանդ, նրանցից 15-ը մահացել է: Այդ մասին այսօր հայտնեց Մախաչկալայում գտնվող Ռուսաստանի առողջապահության եւ բուժաշխատանքերության նախարար Էդուարդ Նեյմանը:

Ընդհանուր առմամբ Դաղստանի Հանրապետությունում խոլերայի հետ կապված իրավիճակն ապահովաբար կայունանում է: Համաճարակի դեմ պայքարում են մոտ 5000 բժիշկներ, միջին բուժանձնակազմի 15 հազար անդամներ եւ միլիցիայի մոտ 200 աշխատակիցներ, որոնք առանձնանում են կարանտինային միջոցառումներով:

Ինչպես հայտարարեց Դաղստանի առողջապահության նախարար Իբրահիմ Իբրահիմովը, խոլերայի համաճարակի հետաձգման վերացման համար հարկավոր է շատ կարգով ձեռնարկել սոցիալ-տնտեսական միջոցներ՝ կառուցել եւ նորոգել ջրատարները, կոյուղին, ապահովել ջրի մաքրումը:

Դաղստանի Նախարարների խորհրդի նախագահի առաջին տեղակալ Նաբիյուլլա Մահոմեդովը հայտնեց, որ երբեմն տարվա համար նախատեսված այդ ծրագրի կատարման նպատակով կպահանջվի 32 միլիարդ ռուբլի: Հանրապետությունը ամբողջ գումարը չի կարող հատկացնել, սակայն Ռուսաստանի կառավարությունը խոստացել է օգնել:

ԱՄՆ

Խիստ նամակ Լեմանից Քլինթոնին

ԱՄՆ Կոնգրեսի անդամ Ռիչարդ Լեմանը մի խիստ նամակ է հղել ԱՄՆ նախագահ Բիլ Քլինթոնին, որով դատապարտում է Հայաստանին ամերիկյան մարդասիրական օգնությունը խոչընդոտելու Թուրքիայի քաղաքականությունը: Մեջբերելով օգոստոսի 12-ի «Ջումհուրիյեթ» օրաթերթը, նա նշում է. «Անկարան երբեմ թույլ չի տա նախագահ Քլինթոնի խոստացած խոշոր ծավալով օգնության առաքումը իր տարածքով»:

Լեմանը նշել է նաեւ, որ անցած 1.5 տարվա ընթացքում ԱՄՆ-ի կառավարությունը չի դատապարտել Հայաստանի ժողովրդին ուղղված օգնության երթափակումը: Թուրքիայի այս բիրտ դիրքորոշումը անմիջապես դեմ է դատապարտվի, եւ ժամանակն է, որ ԱՄՆ կառավարությունը դաշնական Անկարային հասկացնել տա, որ նման գործողություններ չի հանդուրժելու:

Լեմանը անցած գարնանը Կոնգրես ներկայացրեց մարդասիրական օգնության մասին օրինագիծ, որով արգելվում է ամերիկյան օգնության ցուցաբերումը այն երկրներին, որոնք խոչընդոտում են մարդասիրական օգնության առաքումը երրորդ երկրներ: «Անիմաստ է դատնում միլիոնավոր դոլարներ տալ այն երկրներին, որոնք երթթափակում են կարիքավոր ժողովուրդներին սննդամթերք եւ դեղորայք առաքելու ջանքերը», նշված է Լեմանի հայտարարության մեջ:

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

տեղական

ԱԶԳԱՅԻՆ

Հոգեհանգիստ Վեհափառին

Մի քանի օր եւս եւ մենք կզրկվենք բիբլիական Հայոց Հայրապետի բարի տեսությունից

Սկիզբը էջ 1

հուզիչ, որդիական սիրո եւ հավատարմությամբ բարախուն իր խոսքում Արբազան հայրն մասնավորապես ասաց. «Ազգիս Հայրապետը՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ն այսօր կրկին այցի է եկել քաղաքամայր Երեւանի Առաջնորդանիստ Սուրբ Սարգիս եկեղեցի: Բայց սեւաբույր է ժառավենված գեւոր եկեղեցաշինության, ազգային, մշակութային, կրթական ու գիտական, հասարակական, միջեկեղեցական ու միջազգային ասպարեզներում:

Այսօր հեռանում է Հայրապետն Ամենայն Հայոց՝ որպես խորհրդանիշ ազգի եւ Մայր Եկեղեցու նվիրյալ հայրենասերի, որպես խորհրդանիշ իմաստության, արիության, սիրո, արժանվայելը մատուցեց իր մեծանուն Վեհափառին. Հայոց երկնապարգեւ Հայրապետին, առաջինը նրան շնորհելով նորանկախ Հայաստանի Հանրապետության ազգային հերոսի վեհ կոչումը. «Քեզ ի քոյոց ընդ մատուցանեմ»:

Վեհափառ Տեր, երիցս երջանիկ եք Դուք նաեւ այն խորությամբ, որ իրագործված տեսաք Ձեր տարածիկ

Ա. Նավասարդյան. Մենք մեր տեսակետները կպաշտպանենք սահմանադրական հանձնաժողովում

«Քաղաքացիական համաձայնության Սահմանադրության խորհրդի՝ մեր մասնակցությամբ մշակված Սահմանադրության տարբերակի ՀՀ ԳԽ ներկայացնելուց եւ սահմանադրական հանձնաժողովի կազմի ընդլայնելուց հետո, մենք, ինչպես եւ մյուսները, հնարավորություն ունենք պաշտպանելու Սահմանադրության նկատմամբ մեր մոտեցումները: Այսօր այդ բնագավառում մեր գործունեությունը նպատակահարմար ենք համարում ծավալել ԳԽ սահմանադրական հանձնաժողովի շրջանակներում: Այս պատճառով անհիմաստ ենք համարում մեր մասնակցությունը Քաղաքացիական համաձայնության Սահմանադրության խորհրդի հետագա աշխատանքներին»: Այս մասին «Նոյյան տապան» գործակալության թղթակցին ասաց Հայաստանի Հանրապետական կուսակցության (ՀՀԿ) նախագահ Աշոտ Նավասարդյանը՝ մեկնաբանելով Քաղաքացիական համաձայնության Սահմանադրության (այսպես կոչված Վեցյակի սահմանադրության) խորհրդից դուրս գալու պատճառը: ՀՀ ԳԽ որոշմամբ հրապարակում առկա սահմանադրության հինգ տարբերակները, այդ թվում՝ Քաղաքացիական համաձայնության սահմանադրության տարբերակը փոխանցվել է ԳԽ սահմանադրական հանձնաժողով: Ըստ Նավասարդյանի, չբավարարված ուժերի պահանջով ԳԽ սահմանադրական հանձնաժողովը ընդլայնվել է՝ ԳԽ-ում ներկայացված բոլոր կուսակցությունների ներկայացուցիչներին ընդունելով իր կազմում, որի շնորհիվ նրանք հնարավորություն ունեն պաշտպանելու իրենց տեսակետները: ՀՀԿ նախագահը գտնում է նաեւ, որ Սահմանադրության խնդրի շահարկումը չափից ավելի է քաղաքականացված եւ բացի այդ, որոշ ուժերի կողմից «Վեցյակի սահմանադրության» խորհրդի հետագա գործունեությունը ընտրությունների շեմին կարող է որակվել որպես քաղաքական դաշինք, եւ ՀՀԿն ձգտում է խուսափել դրանից: ԼՏ

«Ռեսպուբլիկա Արմենիան» կտպվի սպիտակ էջերով

ԵՐԵՎԱՆ, 25 ՕԳՈՍՏՈՍ, ՄԼՄՐ: Հայաստանի մայրաքաղաքում լույս տեսնող «Ռեսպուբլիկա Արմենիա» խորհրդարանային օրաթերթն այսօր վերջնագիր ներկայացրեց ՀՀ կառի նախարարությանը: Բանն այն է, որ արդեն մի քանի օր է, ինչ չեն գործում խմբագրության 6 հեռախոսները, իսկ կառի նախարարությունը, թերթի պնդման համաձայն, ոչինչ չի ձեռնարկում այդ ուղղությամբ: Եթե 2 օրվա ընթացքում հեռախոսները չգործեն, խմբագրության կոլեկտիվը սպառնում է թերթը լույս ընծայել սպիտակ էջերով եւ մոտավորապես հետեւյալ մակագրությամբ. «Եթե ավտոմատ հեռախոսակայանների եւ կառի նախարարության աշխատակիցների բարեխիղճ աշխատեին, այստեղ հրապարակված կլիներ կարեւոր տեղեկություն»:

Որո՞նք են «Արմենիա» բանկի մասնաճյուղերի իրական հաշիվները

Վերջերս ՀՀ Կենտրոնական բանկի լրատվական կենտրոնը տարածել էր մի հաղորդագրություն, որով հրապարակվում էին ՀՀ ԿԲ-ում գրանցված «Արմենիա» բանկի երկու մասնաճյուղերի հաշիվները (առաջինը՝ Վարդանանց 32, երկրորդը՝ Հանրապետության 47), իսկ այլ հաշիվներով մասնաճյուղերը հայտարարվում էին անվավեր եւ բնակչությանը կոչ էր արվում ձեռնպահ մնալ վերջիններիս ծառայություններից օգտվելուց: Դրան անմիջապես հետեւեց մասնաճյուղերում ավանդներ ունեցող մոտ 10 հազ. ավանդատուների խուճապը (ավանդները ներդրվել են այլ հաշիվներով բանկերում), իսկ 2-րդ մասնաճյուղի տնօրենը հայտնեց օրինական համարվող երկու մասնաճյուղերի ներկայիս հաշիվները (Լենոյի 12 եւ Վարդանանց 5), որոնք տարբերվում են ԿԲ-ի հրապարակած հաշիվներից: Սակայն օգոստոսի 24-ին ԿԲ լրատվական կենտրոնից հայտնեցին, որ իրենց հաղորդագրությունը բնավ չեն պատրաստվում հերքել եւ որ «Արմենիա» բանկի զույգ մասնաճյուղերը գրանցված են իրենց հայտարարած հաշիվներով եւ այլ վայրերում գտնվողների գործունեությունը օրինական չի կարող համարվել, քանի դեռ դրանք չեն վերագրանցվել իրենց գրաղեցրած հաշիվներով: ԼՏ

ԱՆԳՐԱԳԱՐԱ

Արմենպրես. Խնդիրը շատ ավելի լուրջ է

«Ազգ» օրաթերթին տրամադրած «Նոյյան տապան» գործակալության օգոստոսի 23-ին հրապարակված «Արմենպրես» պետական լրատվական գործակալության տնօրենի վերաբերյալ նյութը, մեղմ ասած, տարակուսանք է առաջացնում, թե ինչպես իրեն հարգող գործակալությունը կարող է նման անլուրջ վերաբերմունք ցուցաբերել տեղեկատվության ստեղծման եւ բաշխման գործում:

Ներկա չլինելով «Արմենպրեսի» կոլեկտիվի հետ նոր տնօրենի առաջին հանդիպմանը, «Նոյյան տապանը» չի երկնչել նույնիսկ ուրիշի ուղղակի խոսքը մեջբերելուց, որը, բնականաբար, աղավաղվել է, եւ ընթերցողին ներկայացվել տրամագծորեն հակառակ պատկեր:

Բանն այն է, որ նոր տնօրենի հանդիպմանը, որը եւ շարադրվել է հանդիպմանը, անցյալի ինչ-ինչ բերգումների համար մեղավորներ փնտրելու մոտեցումը անհեռանկար զբաղմունք է եւ ոչնչով չի օգնելու հետագա աշխատանքին: Ինչ վերաբերում է մեծ ջանքերի գնով մասնավոր գործակալությունների մակարդակին հասնելու պետական լրատվական գործակալության նոր տնօրենի վերաբերյալ հավակնոտ պնդումներին, անհրաժեշտ է պարզաբանել, որ համոզմունք է արտահայտվել հայկական պետական լրատվական գործակալությունը դարձնել աշխատունակ, հզոր եւ մրցունակ գործակալություն տարածաշրջանում:

Իսկ միայն Հայաստանում գործող մասնավոր գործակալությունների հետ մրցակցությունը շահելու նպատակ դնելը կլիներ բավական համեստ բնագիծ անհամեմատ հագեցած եւ լայն հնարավորություններ ունեցող պետական կառուցվածքի համար: ԱՐՄԵՆՊՐԵՍ

ՌԱՍԿՈՎՈՒՐ ԱԶԱՏԱԿԱՆ ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության Դ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի հիմնադիր խմբագրություն
Երեւան 375010, Հանրապետության 47
Թելեր 562941, AT&T (7 8852) 151065
Գլխավոր խմբագիր
ՅԱՎԻՐ ԱՎԵՏԻՍՅԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՀԱՍԼԵՏ ԳԱՍՊԱՐՅԱՆ / 529221
Տնօրեն
ԱՍՏՂԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ / 562863
A STYLE հանձնակարգային
ծառայություն / 581841
Ոճը եւ տարածումը ՊԱՏՈՒ ԴԱԼԼԱԲԵԴԻԱՆ
Apple Macintosh
համակարգչային շարվածը
«Ազգ» թերթի
Azg
armenian daily
LIBERAL DEMOCRATIC NEWSPAPER
Editor
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

ԲԱՆԱԿ

Հայաստանը կպատրաստի իր սպայական կադրերը

«Պետության գոյության հիմքը ազգային բանակը, կարող է կայանալ միայն կադրային սպաների առկայության դեպքում: Եկել է ազգային մասնագիտացված բանակի մասնագիտացված ղեկավարման ժամանակը», հայտնեց ՀՀ պաշտպանության նախարարության նորաստեղծ Բարձրագույն զինվորական բազմաոլորտ հրամանատարական ուսումնարանի տնօրեն գեներալ-մայոր Սերգեյ Մարտիրոսյանը: Ուսումնարանը պատրաստելու է բոլոր տեսակի զորքերի վաշտային հրամանատարներ (նշանակության ասիճանով), բացառությամբ օդայուղների, որոնց պատրաստում է ՀՀ պաշտպանության նախարարության ավիացիայի վարչության ուսումնարանը: Սպայական հրամանատարներն ընտրվելու են ժամկետային եւ գեղակետիկ ծառայություն անցած անձանցից՝ զորամասերի հրամանատարների միջնորդությամբ, ինչպես նաեւ միջնակարգ կրթություն եւ զինկոմիսարիատների հանձնարարականներ ունեցող մինչեւ 23 տարեկան քաղաքացիներից: 4 տարվա համար նախատեսված ուսումնական ծրագիրը կազմվել է ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բարձրագույն կրթության եւ գիտության նախարարության աջակցությամբ:

Ուսումնարանի շրջանավարտները զինվորականի հետ մնկտեղ կստանան նաեւ քաղաքացիական մասնագիտություն: Հաշվի առնելով այդ ծրագրի մեջ մտցվել են զինվորական ուղղություն չունեցող տեխնիկական որոշ դիսցիպլիններ (էլեկտրատեխնիկայի եւ հիդրավլիկայի հիմունքներ, էլեկտրական եւ հիդրավլիկ մեքենաներ, նյութերի դիմադրություն եւ այլն): Նախատեսվում է նաեւ հումանիտար եւ հասարակական դիսցիպլինների լայն սպեկտր, որոնք կնպաստեն հայ ազգա սպաների մտածողության զարգացմանն ու աշխարհայացքի ձեւավորմանը (հայ ժողովրդի պատմություն ու արդիականություն, տնտեսական բեռիայի հիմունքներ ու արտաքին էկոնոմիկա, ռազմական հոգեբանության եւ պատրաստության հիմունքներ, սոցիոլոգիա, ԱՊՀ եւ հեռավոր արտասահմանի երկրների հետ ՀՀ զինված ուժերում պայմանագրային իրավական աշխատանք եւ այլն): Ինչպես նշել է Ս. Մարտիրոսյանը, ուսումնարանի ղեկավարությունը դասախոսական կադրերի պահանջ ունի. ցանկալի է, որ նրանք լինեն բուհական եւ ակադեմիական համակարգերից: Վերջիններս կստանան զինծառայողի կարգավիճակ բարձր աշխատավարձ եւ մթերաբաժին ստանալու նպատակով (700-900 դրամի փոխարեն 3-4 հազ. դրամ): «Ուսումնարանի ստեղծումը կլուծի հանրապետության համար կարեւոր մի շարք խնդիրներ. կպատրաստի սպայական ազգային կադրեր եւ պետության համար միլիոններ կխնայի: Ռուսաստանում զինվորական մեկ մասնագետի պատրաստման ծախսերը կազմում են շուրջ 30 մլն. ռուբլի. Ճապոնիայում 150 հազ., իսկ ԱՄՆում 100 հազ. դոլար: Կարեւորագույն ուսումնարանի տարածքը, իսկ զինվորականների ներկայությունը կլավացնի շրջանի ընդհանուր իրավիճակը», ասել է գեներալ-մայոր Ս. Մարտիրոսյանը: ԼՏ

ՀԱՍԱՐՈՍ

ՄԱԿ-ի չորս կազմակերպություն Հայաստանում

ՀՀ կառավարության մարդասիրական հանձնաժողովից «Նոյյան տապան» գործակալությանը հայտնել են, որ հանրապետությունում ներկայումս աշխատում է ՄԱԿի շրջանակներում գործող 4 կազմակերպություն (ՅՈՒՆԻՍԵՖ մանկական հիմնադրամ, փախստականների գծով գլխավոր հանձնակատար, ՄԱԿի զարգացման ծրագիր, ՄԱԿի պարենի համաշխարհային ծրագիր): Ներկայումս ՄԱԿի համաշխարհային պարենի գծով ծրագիրը զբաղված է օգնությունների բաշխման մեխանիզմի մշակմամբ, որը կիրականացվի սեպտեմբերից: Ծրագրով նախատեսված է օգնել մոտ 170 հազ. մարդու: ԼՏ

Կես տարում բնական աճը 11782 մարդ

ՀՀ վիճակագրության պետական վարչությունից հայտնել են, որ նախնական տվյալներով 1994 թ. առաջին կիսամյակում սրտանոթային համակարգի հետ կապված հիվանդություններից հանրապետությունում մահացել է 7193 մարդ (նախորդ տարվա նույն ժամանակահատվածում՝ 10500), չարորակ նորագոյացումներից՝ 1809 (3501), ընչաքաղցության հիվանդություններից՝ 1023 (1919), մարսողական օրգանների հետ կապված հիվանդություններից՝ 514 (1037), դժբախտ պատահարներից՝ 1286 (2345): Նույն աղբյուրի տվյալներով, 1994 թ. առաջին վեց ամիսներին հանրապետությունում ծնվել է 25656 երեխա, մահացել՝ 13874 մարդ, որից 406-ը մինչեւ 1 տարեկան երեխա: Բնական աճը կազմել է 11782 մարդ: Նույն այդ ժամանակահատվածում հանրապետությունում գրանցվել է 8422 ամուսնության եւ 1620 ամուսնալուծության դեպք: ԼՏ

digitised by A.R.A.R.@

ԱՀԳ

ՀՐՁԱՆ ԱՊՀ

Ռուսաստանի ղեկական սահմանի հարցը վերջերս առանձնահատուկ կարևորություն է ստանում: Ռուսաստանի անվտանգության խորհրդի ղեկական սահմանի հարցին նվիրված վերջին նիստերը սեեռում ուշադրություն առաջացրին դաշնակցային սահմանապահ ծառայության եւ դրա գլխավոր հրամանատար Անդրեյ Նիկոլաեւի նկատմամբ: Եւ սա դատահական չէ. քանզի ղեկական սահմանը Ռուսաստանի համար նոր աշխարհաքաղաքական իրադրության դայմաններում վճռական 40 տոկոսը կատաս «բնակության իրավունք», իսկ դա ընդհանրապես նշանակում է դոտենցիալ տարազիր:

Այս բոլոր իրադարձությունները տեղի ունեցան հուլիս-օգոստոսին Ռուսաստանի ճնշմամբ եւ, իհարկե, կատված էին Էստոնիայի տարածից ռուսական զորքերի դուրս բերման խնդրի հետ:

Իր «սովորության» համաձայն, Ռուսաստանը խուսանավով դուրս բերել զորքերը, ամեն ինչ կանի այնդես թե այնդես այդ կարեւոր շրջանից չհեռանալու համար: Իհարկե, դժվար է ասել, թե ռուսական կողմը կհասցնի՞ արդյոք զորքերը դուրս բերել մինչեւ օգոստոսի 31-ը, թե ոչ: Սա այլ հարց է, բայց ընդհանուր առմամբ, դատելով որոշ տվյալներից, Ռուսաստանի կողմից ռուս-էստոնական սահմանի միակողմանի սահմանազծումը վկայում է այն մասին, որ նա չի ուզում Էստոնիային տարածային որեւէ զիջում անել:

Էստոնական կողմի կարծիքով հաստատել են նախքան 1940 թ. սահմաններում Էստոնիան վերականգնելու, այսինքն Պսկովի եւ Լենինգրադի մարզերի որոշ մասը հետ ստանալու դատանջները:

Միակողմանի սահմանազծմամբ Ռուսաստանն ուզում է ասել, որ ինքը նույնիսկ չի ճանաչի սահմանների հարցը, ամենին հիշեցնելով սահմանների անխախտելիության գաղափարը:

Առկա է Ռուսաստանի արտաքին քաղաքականության համար «սովորական» եւս մեկ կողմ: «Ընդմիշտ» չհեռանալու համար նա կարող է «բեմ կետ ստեղծել» Էստոնիայի տարածքում, մանավանդ որ դրա համար ինքն ունի բոլոր «տվյալներ»:

Խոսքը դարձյալ Էստոնիայի ռուսալեզու բնակչության մասին է: «Լույս աշխարհ» հանվեց դեռ 1993 թ. Նարվայում տեղի ունեցած մի փաստ: Այնտեղ կայացել էր հանրաքվե, որի ընթացքում ընտրողներն արտահայտվել էին քաղաքի մշակութային ինքնավարության օգտին, սակայն Էստոնիայի իշխանությունները հանրաքվեի արդյունքները համարել՝ էին անվավեր: Դա տեղի էր ունեցել այն բանից հետո, երբ այդ տարածքների բնակիչների մեծ մասին Էստոնիայի քաղաքացիություն չէր տվել նոր ընդունված «քաղաքացիության մասին» օրենքի համաձայն:

Այսպիսով, Ռուսաստանն ամեն դեպքում ի վիճակի է ցուցադրել իր շահերն այդ շրջանում: Կան նաեւ տնտեսական միջոցներ: Սակայն հարկ է նշել, որ ոչ միայն Էստոնիան, այլեւ Լատվիան եւ Լիտվան երկու տարի առաջ ռուսական կողմի ձեռնարկած որոշ «խիստ միջոցառումներից» հետո այժմ կանոնավորապես եւ ժամանակին վճարում են հումքի ու նյութերի բոլոր մատակարարումների դիմաց:

Հասկանալի է, որ Էստոնիան եւ բալթյան մյուս երկրները ձգտում են մտնել Եւրամիության մեջ եւ դրանով իսկ դակաս չափով կախման մեջ լինել արեւելյան հարեւաններից: Բայց տեսած որոշ տնտեսական խնդիրներ շատ են նաեւ Էստոնիայում: Չիրականացած բազմաթիվ վերլուծաթանների կանխատեսումները ազգային արժույթի կրոնի վերաբերյալ: Այսպես, «Էստի Էմպրես» շաբաթաթերթի մեկնաբանների կարծիքով, էստոնական կրոնները կարելի է կուտակել, եւ տարեսը դրանց չի դիմաչի: Թերը նաեւ նշում է, որ Էստոնիայում դրամական բարեփոխման անցկացման դանից կանխիկ կրոնների քանակությունն աճել է 6 անգամ, տարեսը 3.5 անգամ:

Տեղացի դիտորդների կարծիքով, չնայած ներքին տարեսին, կրոնը կայուն կլինի, եւ որեւե հիշ լուրջ սխալներ արվեն տնտեսական կառավարման մեջ, այնքան երկար կդիմադրվի էստոնական կրոնի կայունությունը: Ընդհանուր առմամբ, եթե համեմատենք Մերձբալթիկայում եւ ԱՊՀ երկրներում ազգային արժույթներ մտցնելու ընթացքները, հարկ կլինի նշել, որ տնտեսական դայմանները ավելի կայուն են մերձբալթյան շրջանում: Իսկ դա ամենանշիչ քաղաքական գիծն է: Այ թե մեր արժույթն էլ ունենար նման ճակատագիր: Բայց ավա՜ղ...

ՌՈՉԱ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Գաղտագիտության թեկնածու

ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Մերձբալթիկա. Ռուսաստանը նոր աշխարհաքաղաքական իրավիճակում

ՈՒԿՐԱԻՆԱ

Ինվեստիցիոն ֆոնդերի հանդեպ վստահությունը լիովին խախտվել է

ՌՈՒԽ-ը դժգոհ է Կուչմայից եւ Մորոզից

Ինչդես չորեքաթթի օրը հայտարարեց Կիեւի ինվեստիցիոն ֆոնդի Լվովի մասնաճյուղի տնօրեն Յուրի Նովակովսկին, MMM բաժնետիրական ընկերության հետ կապված խայտառակ դատմությունը սդառնալիքի տակ է դրել Ուկրաինայի ինվեստիցիոն ֆոնդերի գործունեությունը: Այդ ընկերությունների շրջանառությունը իջել է զրոյի, քանի որ բնակչությունը դադարեցրել է դրանցում իր սեփականաշնորհման չեկերի ներդրումը:

Յուրի Նովակովսկին գտնում է, որ դա կարող է շուկայում արմատապես փոխել իրավիճակը. «Ինվեստիցիոն կառույցները կփտեն, իսկ Ուկրաինայի դյուրահավատ բնակչությունն իր վաուչերները կտանի առայժմ սկսադալներից չարտավորված տրաստային ընկերություններ»:

Մյուս կողմից, օգոստոսի 22-ին Ուկրաինայի համաժողովրդական ՌՈՒԽ-ի մարզային կազմակերդությունը տարածեց Ուկրաինայի նախագահ Լեոնիդ Կուչմային եւ Գխ նախագահ Ալեքսանդր Մորոզին ուղղված դիմում, որով դժգոհություն է արտահայտվում նրանց քաղաքականությունից եւ մասնավորապես Միքիրի նավթի ու գազի արդյունաբերության զարգացման մեջ խոշոր միջոցներ ներդնելու Կուչմայի որոշումից: Փաստաթղթի հեղինակները երկրի ղեկավարներից նաեւ դահանջում են Օդեսայի նավթային նավահանգստի կառուցումը զերծ դահել Ռուսաստանի բնադահդանական կազմակերդություններ ներգրավելու մտադրությունից:

ԻՏԱՐ-ՏԱՍՍ, ԻՍԱ. ՊՐԵՍ

ԿՐԳԸԶՍՏԱՆ

Դատավարություն խորհրդարանային դաշտոնաթերթի դեմ

ԲԻՇՔԵԿ, 23 ՕԳՈՍՏՈՍ, ՍՆԱՐՔ, ԻՍԱ ՊՐԵՍ: Ընդամենը չորս օր տեւեց Կրգըզստանի խորհրդարանային «Սվոբոդնիե գորի» դաշտոնաթերթի նկատմամբ գրի՝ դատարանի կայացրած դատավճիռը: Նման օդերատիվությունը հավանաբար դայմանավորված է վերջերս դատավորների համագումարում հանրադետության նախագահ Ասկար Ակաեւի արած այն կոչով, որ լուծվի այդ հրատարակության փակման հարցը, որին նա մեղադրել էր օրինական իշխանության վարկաբեկման մեջ: Խմբագրությունը նույնիսկ նախատեսված տատը օրը չստացավ դատավճռի գանգատարկման համար, իսկ «Ույկուն» տդարանը դեռ դատավճռոն էլ չստացած հրաժարվեց տդագրել հերքական համարը: «Սվոբոդնիե գորի» աշխատակիցները մտադիր են դիմել Կրգըզստանի գերագույն դատարանին եւ թերեւս նաեւ միջազգային կազմակերդություններին:

Միաժամանակ, Կրգըզստանի նախագահին առընթեր ստեղծվեց լրատվության միջոցների օրենսդրության խախտման համար դատասխանատվության հետ, միավորումների ու կուսակցությունների ազատ ու հեռուստատեսային հաղորդումների տեղադրությանն առնչվող վեճերի լուծման հետ, ինչդես նաեւ դեդության ղեկավարին կաջակցի մամուլի իրավունքների եւ ազատությունների դաշտդանության գործում:

ՖԻՆԱՆՍԵՐ

Ռուսաստանը մտադիր չէ առաջադրել նախկին ԽՍՀՄ արտաքին դարտքի չեղարկման հարցը

Զարգացող երկրների դարտքը Ռուսաստանին՝ 147 միլիարդ դոլլար

Ռուսաստանի փոխվարչադետ եւ էկոնոմիկայի նախարար Ալեքսանդր Շոխինը երկուշաբթի հայտարարեց, որ Ռուսաստանի արտաքին տնտեսական կադերի նախարար Օլեգ Դավիդովի այն առաջարկությունը, թե Արեւմուտքը դետք է չեղյալ հայտարարի Ռուսաստանի արտաքին դարտքը, չի արտահայտում երկրի դաշտոնական դիրքորոշումը եւ «նախարարի անձնական տեսակետն է դարտքի հարցում»: Ռուսաստանի կառավարությունը երբեք չի բարձրացրել եւ մտադիր չէ առաջադրել նախկին ԽՍՀՄ արտաքին դարտքի կամ դրա մի մասի չեղարկման հարցը, քանի որ այդ քայլը ընթացում չէր գտնի համաշխարհային ընկերակցության կողմից, ասվում է փոխվարչադետի մամլո քարտուղարի տարածած հայտարարության մեջ: Ռուսաստանը կարող էր լիովին խախտել վստահությունը իր վճարունակության հանդեպ, ինչը անխուսափելիորեն կհանգեցներ իր տնտեսության մեջ օտարերկրյա ներդրումների եւ միջազգային ֆինանսավարկային համագործակցությանը Ռուսաստանի մասնակցության սառեցման: Բացի դրանից, գտնում է փոխվարչադետը, բազմամյա տարկեցման հարցի առաջադրումը «իրական իմաստ չունի», քանի որ նախկին ԽՍՀՄ վարկատուների «Փարիզյան ակումբի» անդամների հետ բանակցություններ շնորհիվ հաջողվել է վերակառուցել դաշտքի վճարումները, հաշվի առնելով զարգացող երկրների բյուջետային իրական հնարավորությունները:

Մյուս կողմից, զարգացող երկրների դարտքը Ռուսաստանին այժմ գնահատվում է 147 միլիարդ դոլլար, սակայն այն ստացվել է հատարակ թղթանանական հաշվարկով, եւ այդ ամբողջ գումարի վերադարձն ակնկալելը անիրական է, հաշտադ օրն ասաց Ռուսաստանի արտաքին տնտեսական կադերի նախարար Օլեգ Դավիդովը: Ամեն դարտք իր գինն ունի, օրինակ, որոշ երկրների դարտքը, դարտքերի, երկրադրային շուկայի գնանշումների համաձայն կազմում է նախնականի միայն 10 տոկոսը:

Ըստ համաձայնագրերի, դարտքը դետք է մարվի տարեկան 6-7 միլիարդ դոլլարի չափով: Սակայն վճարումների գումարները փաստորեն տարեցտարի նվազում են, ավելացել են տարկեցումները, խնդիրներ են ծագել դարտքերի վերահաշվարկման համար ռուբլու փոխարժեքի որոշման առնչությամբ, միեւ չէ, որ ընդունվում է Ռուսաստանի իրավաժառանգորդությունը դարտքային դարտավորությունների գծով, վաստարում է վճարումների կառուցվածքը, ընդգծեց նախարարը: Դրա հետեւանքով, մի շարք դեդերում հարկ է լինում համաձայնել, որ դարտքերը մարվեն նախնական գումարից կատարող զեղչով: Օլեգ Դավիդովի կարծիքով, բյուջեում դարտադրան երկրների դարտքերի մարման հաշվին տարեկան 2 միլիարդ դոլլար միջոցների մուտքը համադատասխանում է այսօրվա իրադրություններին: 1993 թ. օտար դետությունների դարտքի մարման հաշվին Ռուսաստանն ստացավ մոտ 100 միլիոն դոլլար ալբենիկի դրամ եւ ավելի քան 900 միլիոն դոլլարի արտքեր ադրանքներ:

Ներկայումս սխալ կլիներ դարտքի մարման ադրված եռանդուն միջոցներ չձեռնարկելը: Դա հատկապես վերաբերում է դարտքերի մարման հաշվին ադրանքների առաքումներին:

ԲՐՅԱՍՍԵԼ-ՏԱՍՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ, ՌՈՒՍ ՍՆԱՐՔ

ՈՒՖԱ

Բաշկիրիան կարող է ունենալ սեփական նավատորմ

ՈՒՖԱ, 23 ՕԳՈՍՏՈՍ, ՍՆԱՐՔ, ԻՍԱ ՊՐԵՍ. ԲԱՇԿՈՐՏՈՍՏԱՆ: Միայն ցամաքային սահմաններ ունեցող Բաշկիրիան մոտ ժամանակներս կարող է ունենալ սեփական ծովային նավատորմ: Օրերս այստեղ այցելած կալինինգրադցիների դաստիրակությունը հանրադետության կառավարության հետ քննարկեց Բաշկիրիայի եւ Կալինինգրադի մարզի տնտեսական հարաբերությունների վերաբերյալ այս տարվա գարնանը կնքված համաձայնագրի կատարման կոնկրետ միջոցառումները: Խոսվեց Բաղրիկ ծովի ափին նավահանգստի կառուցման, հեղուկանավերի, ձկնորսանավերի ու բեռնանավերի վարձակալման մասին Բաշկիրիայի համար ծովային մի քանի նավերի գնման մասին: Հանրադետությունը նաեւ մտադիր է դուրս գալ հարավային ծովեր. դաշտոնական այցով Ուֆա այցելած Աբխազիայի ԳԽ նախագահ Վլադիսլավ Արձինբան Բաշկիրիայի նախագահ Մուրթազ Ռահիմովին առաջարկեց փոխշահավետ հիման վրա օգտագործել Աբխազիայի նավահանգիստները:

Միաժամանակ հաղորդվում է, որ Բաշկիրիայի հարկային ոստիկանությունը 13 միլիարդ ռուբլի է հայտնաբերել «Սելենգա-ռուսական տուն» բաժնետիրական ընկերության Ուֆայի ճեղքայացուցչության երկաթյա դահարաններում: Հասկանալով մասնաճյուղի գործունեության ընդհատումից տեղացի 11 հազար ավանդատուների մտահոգությունը, վարչությունը որոշեց հիշյալ գումարը ի դահ հանձնել հանրադետության ազգային բանկին, որդեսզի բացառվի դրա դուրս բերումը Բաշկիրիայից եւ կանխվեն հնարավոր չարաշահումները:

■ *1 միլիարդ դոլլար եւ 150 հազար ռուբլի: Ռուսաստանում ոսկու հանույթի եւ դրա վերամշակման նորմալ ընթացքը կազմակերդելու համար անհրաժեշտ ամենանեղմ ժամկետում մոտ 1 միլիարդ դոլլար ներդնել ճյուղի մեջ: Այդ մասին օգոստոսի 23-ին հայտարարեցին Ռուսաթանկենտաղդոմի մասնագետները Մոսկվայում կայացած մամլո ասուլիսում: ԻՏԱՐ-ՏԱՍՍ-ի թղթակցի հաղորդման համաձայն, ներկայումս Ռուսաստանում ոսկու հանույթը գտնվում է տարեկան մակարդակի վրա, որը հարմար է մոտավորապես 150 տոննայի:* ԱՐՄԵՆՊՐԵՍ

ՈՐԻՍԱՍՏԱՆ

Խոլերայի դեմ՝ հիգիենա

ՍՈՍԿՎԱ, 22 ՕԳՈՍՏՈՍ, ՈՒՍ ՍՆԱՐՔ: Ռուսաստանի բժշկագիտական ակադեմիայի նախագահ Վալենտին Պոկրովսկին կարծում է, որ հնարավոր է խոլերայից զերծ մնալ: Այդ հիվանդության դեմ դայքարելիս գլխավորն անձնական հիգիենայի կանոնների դահդանումն է, դետք է ավելի հաճախ լվանալ ձեռքերը եւ եռացնել չմաքրված ջրամբարների ջուրը, ասում է նա: Խոլերան սկսվում է որոշ վայրի ցավերից, լուծից, փսխումից, եւ հիվանդը շատ միջոցներ չձեռնակելու դեդքում մահանում է օրգանիզմի ջրազրկումից: Առաջին տագնապալի ախտանիշերը հայտնվելիս դետք է խմել աղալուծույթ, որը դժվար չէ իրենուրույն դատրաստել: Դրա համար մեկ լիտր եռացրած ջրին դետք է ավելացնել մեկ ճաշի գդալ աղ եւ կես թեյի գդալ սոդա: Խոլերայի վիբրիոնից ջրերի մաքրման ամենաարագ եղանակը մի քանի ռոպե այն եռացնելն է, ինչդես նաեւ ջրի գտումը կենցաղային հասարակ զտիչներով, որոնք այժմ բաղարկվում են բավարար քանակությամբ:

Միաժամանակ Կիսլովոդսկում երկու օր առաջ բացահայտվեց խոլերայի դեդք. հիվանդացել է 12 ամյա մի աղջնակ, որը ծնողների հետ Դաղստան էր մեկնել ազգակցների մոտ եւ տուն վերադառնալուց հետո թուլություն զգաց:

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

հրատարակ

Ամռան սկզբին էր. բուհերում դասերը դեռ չէին ավարտվել: Հանդիպեցի իմ ծանոթներից մեկին, որը դասավանդում է ժողտնտինստիտուտում: Սովորություն է, չէ՞, ծանոթներն իրար հարցնում են ի՞նչ նորություն: Պատասխանն անսպասելի էր. մեծ նորություն, շտապով տեղափոխվելու ենք նոր շենք, աշխատանքային-անասնաբուժական ինստիտուտի տեղը: Այնպես անհավատալի էր «նորությունը», որ ես կտրուկ ասացի. «Դա անհնար է, այդ շենքը հատուկ է կառուցված, այսինքն շենքը մասնագիտական թեռում ունի»:

Բայց չկա ծուխ առանց կրակի: Հուլիսի վերջին արդեն «ծուխը» լցվել էր տեղահանման ենթակա ինստիտուտի բոլոր մասնաշենքերն ու լաբորատորիաներն. բոլոր լաբորատորիաներն ու դահլիճները: Դառը, կծու «ծխի» հոտն առել էին բերքերը, ուռդիոն, հեռուստատեսությունը: Այսպիսով, նոր ուսումնական տարվա շեմին ամենահարգելի երկու ինստիտուտներում սկսվել երկու ինստիտուտներում: Նեռեցեք, ինչո՞ւ երկու միանգամից երբ գյուղատնտեսական, անասնաբուժական-անասնաբուժական, ժողովրդատնտեսական:

Ժողովուրդը մի խոսք ունի, երբ ադատնտեսական ակադեմիա ստեղծելու մասին» ՀՀ կառավարության 1994 թ. հուլիսի 7-ի թիվ 295 որոշումը:

Ուշադրություն դարձրեք, որոշումն հրադարակելուց ուղիղ մեկ շաբաթ է անցել, բայց արձանագրվել են տասնյակ երևույթներ, լույս են տեսել հոդվածներ, եղել են ռադիոհեռուստատեսային երևույթներ, որոնցից եւ ոչ մեկը կողմ չէ այդ որոշմանը: Սրանցից էլ լավ կողմնորոշի՞չ:

Ակադեմիա գյուղինստիտուտի եւ անասնաբուժականի միավորմամբ: Բառը համադասական ոչեմ է լինի իր իմաստին: Երկու կողմի մասնագետները ասում են՝ ոչ ոք դեմ չէ ակադեմիային, ընդհակառակը, դա հոյակապ գաղափար է, բայց հիմնավորված չէ: Արդյո՞ք այսօր դրա ժամանակն է: Արդյո՞ք կան հիմքեր, միջոցներ, նախագծեր, գործունեության ծրագիր... Ոչինչ չկա: Կա սոսկ որոշումը թղթի վրա, որի երրորդ կետը ոյարգաբանում է մտցնում. «

ԱՇԽ. Միջազգային

ԱՍԻԱ

Նավազ Շարիֆ. Պակիստանը միջուկային զենք ունի

ԴԵԼԻ, 24 ՕԳՈՍՏՈՍ, ԻՏԱՐ-ՏԱՍՍ ԱՐՄԵՆՊՐԵՍ: Պակիստանը միջուկային զենք ունի «համենայն դեպս», հայտարարեց այդ երկրի նախկին վարչապետ Նավազ Շարիֆը:

Երեքշաբթի օրը բազմամարդ հավաքում ելույթ ունենալով Պակիստանի կողմից վերահսկվող Քաշմիրի հատվածում, նա ասաց. «Ես հավատում եմ, որ Պակիստանն ունի ատոմային ռումբ»: «Երբ Հնդկաստանը հարձակվի Պակիստանի վրա, կոպայրի միջուկային ադեն, բանի երկու երկրներն էլ ատոմային ռումբ են ստեղծել», ընդգծեց Նավազ Շարիֆը:

Նախկին վարչապետի հայտարարությունը վերջ է դնում այն երկարատև վիճաբանությանը, թե Պակիստանն ունի՞ արդյոք միջուկային զենք: Պաշտոնական Իսլամաբադը մշտապես հերքում էր այդ փաստը, սակայն միջազգային փորձագետները և հետախուզական աղբյուրները վերջին տարիներին անդադար պնդում էին, թե Պակիստանի գիտնականներին հաջողվել է ստեղծել մի քանի ատոմային ռումբ: Պակիստանի մայրաքաղաքում այս անգամ ևս մերժեցին Նավազ Շարիֆի անաղարտելի բացախոստությունը: «Պակիստանը հասել է միջուկային զենքի արտադրության տեխնոլոգիական հնարավորություններին, բայց մենք գիտակցաբար որոշել ենք դա չանել», կրկնեց երկրի ԱԳՆ ներկայացուցիչը, հավատալով Իսլամաբադի հայտնի դիրքորոշմանը:

Այստեղ դիտորդներն ակնկալում են, թե Դելհի կտրուկ կտրվածքի Նավազ Շարիֆի խոստովանությանը: Առկա են իրական երկյուղներ, որ Հարավային Ասիայում կարող է սկսվել միջուկային սպառազինությունների մրցավազք: Հնդկաստանի կառավարությունը բանից հայտարարել է, թե երկրի միջուկային հետազոտությունների ծրագիրը բացառապես խաղաղ ուղղվածություն ունի, սակայն Հնդկաստանին է մնում «վերջնական միջուկային ընտրության» իրավունքը:

«Իրանը միջուկային զենք չի ստեղծում: Նրա ատոմային ձեռնարկությունները գտնվում են ՄԱԳԱՏԵ-ի վերահսկողության տակ, որի վերջին տեսչական ստուգումն անցկացվեց ընդամենը երկու ամիս առաջ», լրագրողների հետ այստեղ կայացած հանդիպման ժամանակ հայտարարեց Հնդկաստան այցելած Իրանի ԱԱՐԻ-ի ղեկավարը:

Նրա կարծիքով, Իրանը և Հնդկաստանը մեծ հնարավորություններ ունեն Հնդկական օվկիանոսի գոտում, Կենտրոնական Ասիայում գործակցելու համար: Ասիա աշխարհամասը դեռևս է վերագտնի մի քանի դար առաջ աշխարհում իրեն դասկանած գերիշխող դիրքերը: Իրանը և Հնդկաստանը կարող են զգալի դեր խաղալ այդ գործում: Սակայն աշխարհամասի դեպքերի ընդգծեց Ռոուխանին:

Նրա կարծիքով, Իրանը և Հնդկաստանը մեծ հնարավորություններ ունեն Հնդկական օվկիանոսի գոտում, Կենտրոնական Ասիայում գործակցելու համար: Ասիա աշխարհամասը դեռևս է վերագտնի մի քանի դար առաջ աշխարհում իրեն դասկանած գերիշխող դիրքերը: Իրանը և Հնդկաստանը կարող են զգալի դեր խաղալ այդ գործում: Սակայն աշխարհամասի դեպքերի

ԱՍԻԱ

Նավազ Շարիֆ. Պակիստանը միջուկային զենք ունի

տանը հարձակվի Պակիստանի վրա, կոպայրի միջուկային ադեն, բանի երկու երկրներն էլ ատոմային ռումբ են ստեղծել», ընդգծեց Նավազ Շարիֆը:

Նախկին վարչապետի հայտարարությունը վերջ է դնում այն երկարատև վիճաբանությանը, թե Պակիստանն ունի՞ արդյոք միջուկային զենք: Պաշտոնական Իսլամաբադը մշտապես հերքում էր այդ փաստը, սակայն միջազգային փորձագետները և հետախուզական աղբյուրները վերջին տարիներին անդադար պնդում էին, թե Պակիստանի գիտնականներին հաջողվել է ստեղծել մի քանի ատոմային ռումբ: Պակիստանի մայրաքաղաքում այս անգամ ևս մերժեցին Նավազ Շարիֆի անաղարտելի բացախոստությունը: «Պակիստանը հասել է միջուկային զենքի արտադրության տեխնոլոգիական հնարավորություններին, բայց մենք գիտակցաբար որոշել ենք դա չանել», կրկնեց երկրի ԱԳՆ ներկայացուցիչը, հավատալով Իսլամաբադի հայտնի դիրքորոշմանը:

Այստեղ դիտորդներն ակնկալում են, թե Դելհի կտրուկ կտրվածքի Նավազ Շարիֆի խոստովանությանը: Առկա են իրական երկյուղներ, որ Հարավային Ասիայում կարող է սկսվել միջուկային սպառազինությունների մրցավազք: Հնդկաստանի կառավարությունը բանից հայտարարել է, թե երկրի միջուկային հետազոտությունների ծրագիրը բացառապես խաղաղ ուղղվածություն ունի, սակայն Հնդկաստանին է մնում «վերջնական միջուկային ընտրության» իրավունքը:

«Իրանը միջուկային զենք չի ստեղծում: Նրա ատոմային ձեռնարկությունները գտնվում են ՄԱԳԱՏԵ-ի վերահսկողության տակ, որի վերջին տեսչական ստուգումն անցկացվեց ընդամենը երկու ամիս առաջ», լրագրողների հետ այստեղ կայացած հանդիպման ժամանակ հայտարարեց Հնդկաստան այցելած Իրանի ԱԱՐԻ-ի ղեկավարը:

ԱՍԻԱ

ոլյուտոնիումի բանակությունը նախատեսված է եղել Իրանի համար, որը, Իսրայելի արտգործնախարար Շիմոն Պերեսի խոսքերով, «ափաստում է ստեղծել սեփական միջուկային զենք»: «Այդ ոլորտներում չեն համաաստասխանում իրականությանը: Իրանը մտադիր է շարունակել համագործակցությունը ՄԱԳԱՏԵ-ի հետ և կատարել այդ կազմակերպության ոլորտները», տական գործիքը, նշելով, որ Արևմուտքի նմանօրինակ գործողությունները չեն նպաստում շրջանային կայունության ամրապնդմանը:

Հասան Ռոուխանին հայտարարեց, որ Քաշմիրի խնդիրն Ասիայում ամենաբարդներից մեկն է: «Այն կարող է լուծվել միայն Հնդկաստանի, Պակիստանի և Քաշմիրի բնակչության ներկայացուցիչների արդար երկխոսության միջոցով»:

ՕՐՎԱ ՀԱՐՑ

Կուբան փոխում է արտագաղթի բաղաքականությունը

ՀԱՎԱՆԱ, 24 ՕԳՈՍՏՈՍ, ԻՏԱՐ-ՏԱՍՍ ԱՐՄԵՆՊՐԵՍ: Կուբան հայտարարեց իր արտագաղթի բաղաքականության փոփոխությունների մասին: Երեքշաբթի օրը մամլո ասուլիսում ելույթ ունենալով, Կուբայի ԱԳՆ ոլորտային ներկայացուցիչ Խոսե Կաբանյասը հայտնեց, որ ընդունվել են նոր օրենքներ, որոնք նախկին կուբացիներին թույլ են տալիս վերադառնալ հայրենիք, ինչպես նաև կրկի այցելել առանց դժվարության:

Այսուհետև, ընդգծեց ներկայացուցիչը, երեքշաբթի օրվանից փոխվել է 35 տարի գործած գաղթի օրենքը: Նոր դրույթներին համաձայնությանն օտար երկրներում ապրող կուբացիները կարող են առանց այցագիր խնդրելու մեկնել Կուբա:

Մշտական բնակության կարող է վերադառնալ նաև «Ազատության կղզու» ամեն մի նախկին բնակիչ, ոլորտանով, որ նա մասնակցած չլինի Կուբայի ոլեսական անվտանգությանը դեմ հանցագործությունների, հայտնեց Կաբանյասը: Նրա խոսքերով, բազմաթիվ զանազան կուբացիներ ուզում են վերջնականապես հայրենիք վերադառնալ:

Կուբայի իշխանությունները նաև որոշել են 20-ից 18-ի իջեցնել այն տարիքը, որից հետո բոլոր ցանկացողները կարող են իմքնուրույնաբար մեկնել արտասահման: Ընդամենը արտասահմանում մնալու ժամկետն ավելացվել է, 6-ից հասցվելով 11 ամսվա:

Նոր դրույթները չեն տարածվում նրանց վրա, ովքեր երկրից մեկնել են անկեղծ կերպով, ընդգծեց ԱԳՆ ներկայացուցիչը: Նա նշեց, որ Կուբան հանդես է գալիս բաղաքացիների անօրինական փոխադրման դեմ: Մենք փորձում ենք բոլոր հնարավոր միջոցներով տարհամոզել ոտնձգիչ փոխադրականներին, բայց դա շատ դժվար է, քանի որ ԱՄՆ-ը շարունակում է խրախուսել կուբացիների անկեղծ մեկնումը, ասաց Խոսե Կաբանյասը:

Մինչդեռ կղզուց կուբացիների վտարումը համաձայնած բնույթ է ստանում: Հատկանշական է, որ տիրաբնակները իմքնաշեն նավակներով ու լաստերով վտանգավոր նավարկության են մեկնում օր ցերեկով, չվախենալով ռազիկանությունից և սահմանապահներից: Փախստականների լաստերը քանիցս մեկնել են մայրաքաղաքի «Մալեկոն» առափնյակից: Ավելին, ավտոմոբիլներ հանախ ցերեկով տանում են իմքնաշեն փչոքի լաստեր:

Հավանություն լուրեր են ոլորվում այն մասին, թե ով երբ է մեկնել: Ավելի հանախ մեկնում են ամբողջ ընտանիքով, երբեմն նույն բաղաքի միանգամից մի քանի ընտանիքներով: Ամերիկյան մամուլի տվյալների համաձայն, օգոստոսի 13-20-ը արձանագրված փախստականների բիվը կազմել է 3468, որը գրեթե հավասար է անցյալ տարվա փախստականների ընդհանուր բիվին (3656): Այս տարի ընդամենն արձանագրվել է կուբացի 8928 փախստական: Խոսե Կաբանյասի խոսքերով, զոհվում է Ֆլորիդայի նեղուցում վտանգավոր նավարկության մեկնող մարդկանց 1/3-ը: Երբեմն խելահեղ այդ փախուստի պատճառ դարձել Կուբայի հյուսիսային ափերի մոտ դիակների հայտնվելը:

ԵՎՐՈՊԱ

Իտալացիները նախընտրում են փոքր քաղաքները

ՀՌՈՄ, 23 ՕԳՈՍՏՈՍ, ԻՏԱՐ-ՏԱՍՍ ԱՐՄԵՆՊՐԵՍ: «Կյանքի որակի» հարցում իտալացիների ճաշակն ու պահանջները արագորեն փոփոխվում են: Այսօր Իտալիայում ավելի ու ավելի մեծ թվով մարդիկ նախընտրում են ապրել ոչ թե մայրաքաղաքում կամ վարչական մեծ կենտրոններում, այլ փոքր քաղաքներում: Սրանք են երկրում վերջերս անցկացված հանրային կարծիքի հետազոտության արդյունքները: Այդ հետազոտության համաձայն, «կյանքի համար առավել նպաստավոր բնակավայրերի» ցանկի մեջ մտնում են համեմատաբար փոքր գավառական քաղաքներ Տրենտոն, Սիենան և Աոստան: Իտալացիների կարծիքով, հենց դրանցում են լավագույնս զուգորդվում քաղաքային հարմարությունները և բնության մոտիկության առավելությունները: Ընդամենը երեք տարի առաջ համանման հարցման ընթացքում իտալացիները կյանքի համար առավել նպաստավոր քաղաքների թվում նշել էին վարչական և արդյունաբերական խոշոր կենտրոններ Միլանը, Բոլոնիան, Մոդենան: Այսօր երկրի բնակիչների մեծ մասին բնավ չի հրապուրում այդ քաղաքներում ապրելու հեռանկարը:

ՀԱՇՏԱՐԱՆ

1 կգ ոլյուտոնիումով ատոմային ռումբ

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 24 ՕԳՈՍՏՈՍ, ԻՏԱՐ-ՏԱՍՍ ԱՐՄԵՆՊՐԵՍ: Միջուկային մեկ ռումբի արտադրության համար բավարար ոլյուտոնիումի և զենքարտադրված ուրանի նվազագույն քանակությանը ՄԱԳԱՏԵ-ի տված դաշտանական գնահատականները որ անգամ ուռճացված են, ու վերջերս Գերմանիայում բռնագրավված մաքսանենգային ուղիտակիվ նյութերի ընդհանուր ծավալն «ընդհուպ մոտենում է կրիտիկական նշագծին»: Երեքշաբթի օրն այստեղ կայացած մամլո ասուլիսում այս հայտարարությամբ հանդես եկավ ամերիկյան հայտնի հասարակական կազմակերպության բնապահպանների դաշտանությունից մեկը ֆիզիկոս Թոմաս Քոկրենը:

ՄԱԳԱՏԵ-ի չափանիշներով որոնս «կրիտիկական զանգված» սահմանվում է 8 կգ ոլյուտոնիումը: Քոկրենի խոսքերով, իր ու գործընկերների անցկացրած հետազոտությունը վկայում է, որ այսօր բավական է 1 կգ ոլյուտոնիում օգտագործել այնպիսի դայթուցիկ սարք ստեղծելու համար, որը կարող է ոչնչացնել քաղաքային 40 թաղամաս: Նորագույն տեխնոլոգիաների շնորհիվ մարտագլխիկը միանգամայն կարելի է լցնել նյութի այդ քանակությամբ, որը կտեղավորվի գլանակների տուփի մեջ, ընդգծեց գիտնականը:

Բնապահպանների դաշտանությունը խորհրդի կարծիքով, ՄԱԳԱՏԵ-ի ուռճացված չափանիշները հանգեցնում են այն բանին, որ Արևմուտքը լրջորեն բերազնահատում է միջուկային մաքսանենգության հետեւանքները և ԿԺԴՀ-ի ատոմային զինանոցի հնարավոր չափերը: «Պաշտոնական գնահատականները ոչ միայն հնացել են, այլեւ վտանգավոր են», նշեց Թոմաս Քոկրենը, հայտնելով, որ իր կազմակերպությունը ԱՄՆ-ի եւ ՄԱԿ-ի ղեկավարությանը նամակներ է հղել կոչ անելով վերանայել իրենց ընդունած ոլյուտոնիումի ու զենքարտադրված ուրանի «կրիտիկական զանգվածները»:

Պենտագոնի եւ ոլեղեոյարտամենտի մամլո բաժիններում խորհրդի հետեւությունների առթիվ տրվեցին միանման դաշտանություններ, որոնց էությունն այն է, թե այդ գերտեսությունները առայժմ ասելիք չունեն տվյալ խնդրի վերաբերյալ: Մինչդեռ ԱՄՆ-ի էներգետիկայի նախարար Հեյզել Օ'Լիրին մամլո ասուլիսից հետո հայտարարեց, որ նախատեսում է «անհապաղ երկխոսություն սկսել միջուկային նյութերի կրիտիկական զանգվածների շուրջ», եւ փորձագետներին կարգադրեց այդ հարցն ուսումնասիրել «միջուկային զենքը չտարածելու բնագավառում երկրի խնդիրների առավելագույն կատարման» նպատակով:

ՀԱՄԱՌՈՏ

Անապա. Լիբանանցիները կառուցում են այգի

ԱԼԱՊԱ, 23 ՕԳՈՍՏՈՍ, ՄԱՐՔ, ԻՏԱՐ-ՏԱՍՍ: Քաղաքի վարչակազմը լիբանանյան ֆիրմաներից մեկի հետ համաձայնագիր ստորագրեց այստեղ միջազգային մանկական զբոսայգու կառուցման ու շահագործման վերաբերյալ: Այն իրենից կներկայացնի մեր մոլորակի մասերերը օվկիանոսներով, մայր ցամաքներով ու երկրներով, որտեղ կարելի է ճանապարհորդել: Նախատեսվում է նաև առողջավայրում բացել հինգ աստղանի հյուրանոց: Նախագծի իրականացման նպատակով ստեղծվում է միջազգային բաժնետիրական ընկերություն:

Լաստիները եւ այլազգիները «խաղաղ գոյակցում են»

ՌԻՈ, 23 ՕԳՈՍՏՈՍ, ՌԻՈ ՄՆՈՐ: Լաստիների 57 եւ այլազգիների 60 տոկոսը Լաստվիայում ազգամիջյան հարաբերությունները դրական են գնահատում, դրանք անվանելով «խաղաղ գոյակցություն»: Լաստիների 27 եւ այլազգիների 21 տոկոսի կարծիքով, այդ հարաբերությունները այնուամենայնիվ ավելի վատ են, քան կարող էին լինել: Իսկ այլազգիների 2 տոկոսը գտնում է, որ դրանք շատ վատ են: Հարցման այս արդյունքները հրապարակել է սոցիալական հետազոտությունների հանրապետական կենտրոնը:

Լուծարվեց ռուս-ավստրալական առաջին ձեռնարկությունը

ՄՈՍԿՎԱ, 23 ՕԳՈՍՏՈՍ, ԲԻԶՆԵՍ-ՏԱՍՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ամուրի Կոմսոմոլսկում վերջվեց ռուս-ավստրալական «Ամուրսալ-Հենկոկ» ձեռնարկությունը: Դրա հիմնադիրներ «Մեսալուրգպրոմ» կոնցեռնը, «Ամուրսալ» գործարանը եւ «Հենկոկ ինտուրիսկ լիմիտեդ» ֆիրման մտադրվել էին իրականացնել երկաթի հանքաքարի արդյունահանման, մետաղի ու բիրեղի բողարկման ծավալուն նախագիծ: Նախատեսվում էր Կոմսոմոլսկում կառուցել դողդոջի ու գլանվածքի բողարկման նոր կարողություններ եւ արդիականացնել հները: Մասնագետների կանխատեսումներով, արդեն առաջին փուլում արժութային զուտ հասույթը ոլեսք է կազմեր տարեկան 75 միլիարդ դոլար:

Պայմանագրի համաձայն, «Ամուրսալ-Հենկոկի» միջոցով ստեղծվում էր գլանվածք: Ավստրալական կողմը ոլեսք է վերակառուցեր դողդոջի ձուլման արտադրությունը: Ըստ ոլորտ կանոնադրական հիմնադրամի գոյացման ժամանակաշրջանում համատեղ ձեռնարկությունն ազատվում էր ավելացված արժեքի հարկից: Բայց, եթե մեսաղը կանոնավորապես տեսակվում էր արտասահման, ապա կանոնադրական հիմնադրամը համարել չէին էսապում: Չկայացավ նաեւ արտադրության վերակառուցումը: Ռուսի հարկային տեսչությունը տուգանեց 1 միլիարդ 503 միլիոն ռուբլի, որոշում ընդունվեց ձեռնարկության լուծարման մասին:

Ըստ երեւույթին գործընկերները կանխատեսել էին այս ավարտը եւ վերջերս ստեղծեցին նոր ձեռնարկություն: Դժվար է ասել, թե արդյոք դրա գործունեությունը արդասավոր կլինի թե ոչ: Մինչդեռ Խաբարովսկի «Տեղեց» ֆոնդային տուն եռանդագին գնում է «Ամուրսալ» բաժնետիրական ընկերության բաժնետոմսերը: 1700 ռուբլիանոց այդ արժեթղթերը գնվում են 9-12 հազարով: Բացառված չէ, որ դրա հետեւում կանգնած է «Հենկոկը», որը փորձում է մտնել ռուսական ձեռնարկության բաժնետոմսերի ստուգիչ ծրարին:

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Մշակույթ

– Էդգար, ինչպե՞ս եղավ, որ հայտնվեցիր թատրոնում:

– Առաջին անգամ ես ելույթ ունեցա Սունդուկյանի թատրոնում մի փոքրիկ՝ ութանց խոսքերի դերում, ուղղակի երեխա էր հարկավոր: Դա Նիկոլայ Ծատուրյանի ներկայացումն էր: Մայրիկս էլ էր խաղում այնտեղ: Հետո նկարահանվեցի «Որտե՞ղ էիր, մարդ աստծո» 5 մասանոց ֆիլմում, որը ցավոք, դեռ երեր չի դուրս եկել: Առա սկսեցի ելույթ ունենալ Պատանյանի թատրոնում եւ հետո արդեն՝ հայրիկիս «Արիոն» թատրոնում: Խաղալն ինձ համար հաճույք է, երբ ես 6 տարեկան էի, կինոստուդիայում մի քանի ֆիլմ ձայնագրեցի, ու տափկս հարցնում էր, թե չե՞մ հոգնում, որովհետեւ ուրիշները հոգնում էին, խոնավ էր այնտեղ: Ես զարմանում էի՝ ինչո՞ւ ոչինչ հոգնեմ, հազարից մեկ է ֆար: Այնուհետեւ «Գիրք գրող» մուլտֆիլմը ձայնագրեցի, որը դերակատարներից մեկի մահանալու պատճառով ընդհատվեց, բայց կատարելագործվեցի...

– Դու ֆո ափսասանի համար վարձատրվու՞մ ես:

– Այո, ստանում եմ, հայրիկիս թատրոնում՝ ամսական 500 դրամ:

– Իսկ ի՞նչն է քեզ գրավում թատրոնում:

– Թատրոնում ինձ գրավում են կերպարները, ի դեմ, ես չեմ սիրում բարի դերեր, ես սիրում եմ չար դերեր: Որքան չար, այնքան լավ: Եւ իմ այս դերը՝ «տեսիլը», չար է: Նա շատ ծեր է եւ շատ բան գիտի, չնայած, որ արտաքինով չի փոխվել: Նա կարող է եւ՝ բարի լինել, եւ՝ չար: Նրա մեջ կա դաժանություն:

– Ո՞ր դերն ես ամենից շատ սիրում:

– Հենց այս դերը, որովհետեւ նա ինձ նման է:

– Իսկ ո՞րն է պիեսում քո ամենասիրած քրազը:

– Դրանք այստեղ քրազներ չեն, այլ անցումներ են... «Ո՞վ է ուզում ինձ տիկա անվանել, զանգս ջախջախել, մորուս փետել... զարկել երեսիս...» եւ այլն: Ահա սա է ամենասիրած խոսքս:

– Ի՞նչ ես ուզում դառնալ ապագայում:

– Առայժմ ուզում եմ դերասան դառնալ, բայց ծնողներս չեն ուզում, ասում են. «Կոմպոզիտոր, հա՝ կոմպոզիտոր»: Բայց, չէ՞: Նախընտրում եմ դերասանությունը: Կդառնամ դերասան եւ կգրեմ երաժշտություն իմ ներկայացումների համար, ինչպես այս պիեսում:

– Իսկ երբվանի՞ց ես երաժշտություն գրում:

– Երբ ընդունվեցի երաժշտական դպրոց, հենց առաջին դասարան ներկայացա իմ ստեղծագործություններով եւ անցա երկրորդ դասարան: Իսկ ստեղծագործում եմ վաղուցվանից:

– Ի՞նչ ես սիրում ամենից շատ:

– Սիրում եմ, երբ շատ զայրացած եմ լինում, եւ որ կողիս դաշնամուր է լինում: Մի անգամ ծնողներս ինձ դպաժել էին եւ չէին թողնում, որ բակ գնամ: Ես էլ գնացի, նստեցի դաշնամուրի առջեւ եւ «Ռեքվիեմ» ստեղծագործությունս հորինեցի: Մայրիկս հարցրեց, թե ի՞նչ եմ անում, ես էլ դպաստասանեցի, որ «Ռեքվիեմս» եմ նվագում: Ու ինքը ասաց. «Լավ, լավ, արժանի ես, իջիր բակ»:

– Իսկ ի՞նչ չես սիրում:

– Պանիր չեմ սիրում, որովհետեւ... երեւի նրա համար, որ զարշահոտ է գալիս, չգիտեմ, հա՛, հա՛, հա՛... Իսկ բացի դաներից չեմ սիրում բակի այն տղաներին, որոնք կռվում ու դավեր են նյութում, ասենք, մի լավ տղայի դեմ: Եւ այսպես ասած, բունավորում են բակի բոլոր երեխաներին, ու բոլորը լարվում են բոլորի դեմ: Սրսկում են...

– Հայրիկիդ բենամիներն են սուտը, կեղծիքը, վախկոտությունը եւ տգիտությունը: Որո՞նք են քո բենամիները:

– Իմ հայրիկի բոլոր բենամիներն էլ իմ բենամիներն են: Ես չեմ սիրում վախկոտ մարդկանց, որովհետեւ միշտ դաշտանում եմ նրանց, ու միշտ իրենց դաշճառով ընկնում կոիվների մեջ:

– Դու ինչպիսի՞ մարդ ես:

– Ես բախտագույցով շուն եմ եւ շատ հավատարիմ եմ իմ ընկերներին, բայց երբ կռվեցի, էլ չեմ հաշվի:

Ամենակրտսեր Էլբակյան. Ծափերին չհավատալ

Օրերս մեր թերթի էջերում տպագրվել էր «Ծատրոնը վերադառնում է հրապարակ» հոդվածը, որը պատմում էր օգոստոսի 14-ին Երեւանի «Արիոն» թատրոնում տեղի ունեցած՝ Արմեն Էլբակյանի «Ինչո՞ւ ենք լռում» պիեսի պրեմիերայի մասին: Պիեսն այսօրվա մտավորականի, դերասանի ապրումների մասին է, որի շուրջ ստեղծված պատմվում է իր մանկության խորհրդավոր տեսիլը: Տեսիլի դերը մարմնավորում է կրտսեր Էդգար Էլբակյանը՝ Արմեն եւ Անետ Էլբակյանների որդին: Ի դեղ, պիեսում հնչում է տասնեւհինգամյա Էդգար Էլբակյանի երաժշտությունը: Պրեմիերայի օրը դադարեցվել էր էլեկտրական հոսանքի մատակարարումը, ու այն անցավ բնական լույսի եւ Էդգարի երաժշտության «բնական» կատարման ներքո: Մեր ամենաերիտասարդ թղթակից Արամ Մկրտչյանի հարցազրույցը խոսամանալից փոքրիկի համար ամենատաքինն է.

Կրտսեր Էդգար Էլբակյանը «Ինչո՞ւ ենք լռում» ներկայացումում «Արիոն» թատրոն, 1994 թ.

– Ինձ համար հաճույք է, երբ ես 6 տարեկան էի, կինոստուդիայում մի քանի ֆիլմ ձայնագրեցի, ու տափկս հարցնում էր, թե չե՞մ հոգնում, որովհետեւ ուրիշները հոգնում էին, խոնավ էր այնտեղ: Ես զարմանում էի՝ ինչո՞ւ ոչինչ հոգնեմ, հազարից մեկ է ֆար: Այնուհետեւ «Գիրք գրող» մուլտֆիլմը ձայնագրեցի, որը դերակատարներից մեկի մահանալու պատճառով ընդհատվեց, բայց կատարելագործվեցի...

– Դու ֆո ափսասանի համար վարձատրվու՞մ ես:

– Այո, ստանում եմ, հայրիկիս թատրոնում՝ ամսական 500 դրամ:

– Իսկ ի՞նչն է քեզ գրավում թատրոնում:

– Թատրոնում ինձ գրավում են կերպարները, ի դեղ, ես չեմ սիրում բարի դերեր, ես սիրում եմ չար դերեր: Որքան չար, այնքան լավ: Եւ իմ այս դերը՝ «տեսիլը», չար է: Նա շատ ծեր է եւ շատ բան գիտի, չնայած, որ արտաքինով չի փոխվել: Նա կարող է եւ՝ բարի լինել, եւ՝ չար: Նրա մեջ կա դաժանություն:

– Ո՞ր դերն ես ամենից շատ սիրում:

– Հենց այս դերը, որովհետեւ նա ինձ նման է:

– Իսկ ո՞րն է պիեսում քո ամենասիրած քրազը:

– Դրանք այստեղ քրազներ չեն, այլ անցումներ են... «Ո՞վ է ուզում ինձ տիկա անվանել, զանգս ջախջախել, մորուս փետել... զարկել երեսիս...» եւ այլն: Ահա սա է ամենասիրած խոսքս:

– Ի՞նչ ես ուզում դառնալ ապագայում:

– Առայժմ ուզում եմ դերասան դառնալ, բայց ծնողներս չեն ուզում, ասում են. «Կոմպոզիտոր, հա՛ կոմպոզիտոր»: Բայց, չէ՞: Նախընտրում եմ դերասանությունը: Կդառնամ դերասան եւ կգրեմ երաժշտություն իմ ներկայացումների համար, ինչպես այս պիեսում:

– Իսկ երբվանի՞ց ես երաժշտություն գրում:

– Երբ ընդունվեցի երաժշտական դպրոց, հենց առաջին դասարան ներկայացա իմ ստեղծագործություններով եւ անցա երկրորդ դասարան: Իսկ ստեղծագործում եմ վաղուցվանից:

– Ի՞նչ ես սիրում ամենից շատ:

– Սիրում եմ, երբ շատ զայրացած եմ լինում, եւ որ կողիս դաշնամուր է լինում: Մի անգամ ծնողներս ինձ դպաժել էին եւ չէին թողնում, որ բակ գնամ: Ես էլ գնացի, նստեցի դաշնամուրի առջեւ եւ «Ռեքվիեմ» ստեղծագործությունս հորինեցի: Մայրիկս հարցրեց, թե ի՞նչ եմ անում, ես էլ դպաստասանեցի, որ «Ռեքվիեմս» եմ նվագում: Ու ինքը ասաց. «Լավ, լավ, արժանի ես, իջիր բակ»:

– Իսկ ի՞նչ չես սիրում:

– Պանիր չեմ սիրում, որովհետեւ... երեւի նրա համար, որ զարշահոտ է գալիս, չգիտեմ, հա՛, հա՛, հա՛... Իսկ բացի դաներից չեմ սիրում բակի այն տղաներին, որոնք կռվում ու դավեր են նյութում, ասենք, մի լավ տղայի դեմ: Եւ այսպես ասած, բունավորում են բակի բոլոր երեխաներին, ու բոլորը լարվում են բոլորի դեմ: Սրսկում են...

– Հայրիկիդ բենամիներն են սուտը, կեղծիքը, վախկոտությունը եւ տգիտությունը: Որո՞նք են քո բենամիները:

– Իմ հայրիկի բոլոր բենամիներն էլ իմ բենամիներն են: Ես չեմ սիրում վախկոտ մարդկանց, որովհետեւ միշտ դաշտանում եմ նրանց, ու միշտ իրենց դաշճառով ընկնում կռիվների մեջ:

– Դու ինչպիսի՞ մարդ ես:

– Ես բախտագույցով շուն եմ եւ շատ հավատարիմ եմ իմ ընկերներին, բայց երբ կռվեցի, էլ չեմ հաշվի:

Հիշաչար չեմ, ուղղակի չեմ սիրում, որ ինձ վիրավորում են, որովհետեւ ես առաջինը երբեք չեմ վիրավորում: Ես ունեմ չորս ընկեր, չորսն էլ ծնվել են շատ տարում եւ չորսն էլ դաներ չեն սիրում: Եւ իմ ընկերուհին էլ դաներ չի սիրում: Իմ ընկերուհին մեր բակում է ապրում: Մենք վաղուցվանից ընկերություն ենք անում: Ապրում ենք անկախ Հայաստանում (մարդ ոչի անկախ լինի):

– Օրինակ, պիեսում կրկնվում է այս միտքը՝ «անկախություն տվին, օդ չտվին»... Քեզ օդ տվե՞լ են:

– Ոչ, չեն տվել, որովհետեւ նստած եմ «ձվի կճեպի մեջ»:

– Քո մայրիկը ասում է, որ դուք հաճախ տանը վիճում եք, եւ տենցիների դաշճառով միշտ դարտվում ես...

– Ցավոք, դա ճիշտ է, բայց ես չեմ դարտվում: Մենք վիճում ենք, իսկ վերջում դժբախտաբար մայրիկս կոշիկը խփում է գլխիս, ես էլ մի բան վերցնում եմ ու տալիս եմ նրա ոտքերին, քանի որ գիտակցում եմ, որ գլխին խփել չի կարելի: Նա էլ ընկնում է եւ գոռում, որ մա՛մ, Էդգարը խփե՞ց... Եւ վերջ: Վերջս գալիս է...

– Հաճախ ինչ զոփում են, երբեւէ չե՞ս մեծամտացել այդ դահերին:

– Մի անգամ Գոռոների տանը Սիփան Շիրազը ինձ ասաց. «Կյանքում ծափերին չհավատաս: Իմ հայրն էր ինձ ասում, հիմա էլ ես քեզ եմ փոխանցում: Դու միշտ դեսէ պետք է քեզ վրա աշխատես»: Եւ ես այդ խոսքերը չնդունեցի որպես «քամին փչի, տանը հաշի», այլ՝ հավատա, որ նա ճիշտ է...

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

«Այս տարի դասագրքերը տրվելու են անվճար»

Հոկտեմբերի օրը ՀՀ լուսավորության նախարարության ծրագրամթերողական բաժնի պետ Համլետ Կարապետյանի սենյակում բավականին թեժ վեճ էր ծավալվել նոր ուսումնական տարվա ծրագրերի շուրջ: Խոսքը մասնավորապես «Աշխարհագրություն» առարկայի ծրագրի մասին էր: Ոմանք պնդում էին, որ Հայաստանի աշխարհագրության ծրագիրն այնպես է փոփոխված, որ անհնար է չտպագրել նոր դասագիրք, իսկ դրան զուգահեռ կառավարությունը պնդում է. «Որը որ կարելի է բաց թողնել կամ այդքան էլ անհրաժեշտ չէ՝ մի տղեք: Ամեն էջը կոդեկ առ կոդեկ հաշվված է: Ոչ մի ավելորդ էջ չտղեք...»: Վեճի ավարտին բոլորը կարծես համոզվեցին, որ «եթե հիմա ենք որոշում ծրագիրը, որը ուսուցիչը պիտի տեսնի հունվարին եւ մի կիսամյակ ստիպված է դարաոդել առանց ծրագրի, կարող է դարաոդել նաեւ երկրորդ կիսամյակում...»: Այնուամենայնիվ, երբ մթնոլորտը բերեւակի լիցքաթափվեց, որոշեցին որոշ. Կարապետյանից իմանալ, թե ի՞նչ է տպատում աշակերտներին այս տարի: «1994-95 ուսումնական տարվա համար, մինչեւ սեպտեմբեր նախատեսված էր հրապարակել 53 անուն դասագիրք, որոնցից 34-ը նոր են, իսկ 19-ը վերահրատարակվող: Այսօրվա դրությամբ, ցավոք, տպագրվել է ընդամենը 8 անուն դասագիրք, որոնք մինչեւ այսօր դպրոց չեն հասել: Մամուլի դեպարտամենտից եւ «Լույս» հրատարակչությունից հաղորդել էին, որ մնացած դասագրքերի տպագրությունը կավարտվի սեպտեմբերի կեսերին, իսկ այժմ էլ ասում են, որ չեն հասցնի եւ կավարտեն հոկտեմբերին: Դա պատճառաբանում են թղթի եւ ֆինանսական միջոցների անկանոն մատակարարմամբ: Ի դեղ, այս տարի կառավարության ջանքերի շնորհիվ, դասագրքերը երեխաներին կբաժանվեն անվճար: Երբ տպագրվեն բոլոր գրքերը, դասագրքի խնդիր չի լինի»:

Իսկ մինչեւ հոկտեմբեր ինչո՞վ պետք է սովորեն երեխաները, որոշ. Կարապետյանը պատասխանեց. «Այդ մասին արդեն հայտարարված է դպրոցներին. մինչեւ նոր ծրագրերի եւ դասագրքերի դպրոց մտնելը, պետք է օգտագործել նախորդ տարիների օգտագործված ծրագրերն ու գրքերը: Դրանց մեջ շատ տարբերություններ չկան: Ուրախությամբ պիտի ասեմ, որ մինչեւ այժմ հրապարակված ոչ մի նոր ծրագրի, դասագրքի կամ ձեռնարկի մասին ոչ մի բացասական կարծիք չի արտահայտվել հանրապետության մասնագետների կողմից: Կուզեմ մի բան հատուկ նշել, թե «Պոլիգրաֆ» կոմբինատը, ունենալով 22 դասագրքի պատվեր եւ մինչեւ օրս չկատարելով այդ պատվերը, ինչպե՞ս է հեռուստատեսությամբ գովազդում, թե ի վիճակի է տպագրել ցանկացած գիրք, ցանկացած տպաքանակով...»:

Այն հարցին, թե շատ դպրոցներում եւ հիմնարկներում կան մեծ քանակությամբ թղթեր, անոթեցիր գրքեր, թղթի թափոն, եւ չե՞ն պատրաստվում օգտագործել այդ հումքը, որոշ. Կարապետյանը պատասխանեց. «Դա շատ ցավոտ եւ տեղին հարց է, որը դուրս է գալիս լուսավորության նախարարության համակարգից: Ցավոք, այսօր հանրապետությունում չկա այնպիսի ձեռնարկություն, որը կարողանար վերամշակել այդ մեծ քանակությամբ երկրորդական հումքը: Այդ հարցը քննարկման առարկա է, եւ փնտրում ենք հովանավորներ: Պետք է օգտագործել այդ հումքը, այլապես այն կդառնա վտանգի ծծման համար:

Ինչպե՞ս են հայտնվում դասագրքերը տուկայում եւ ինչպե՞ս կարելի է դրա դեմ պայքարել, հարցին որոշ. Կարապետյանը պատասխանեց. «Դասագրքերից բացի էլի շատ բան է հայտնվում սեղանիկներին. դժբախտաբար դրանց ավելացել են նաեւ դասագրքերը, եւ իրավական տեսակետից այդ վաճառքն արգելել չի կարելի: Միակ զենքը սույն հայտարարությունն է՝ «Այս տարի դասագրքերը տրվելու են անվճար»: Վերջերս տեղեկություններ ենք ստացել, բայց փաստեր չկան, որ ինչ-որ տեղ վաճառվում են 94-95 թթ. դասագրքեր: Դա արտառոց եւ բոլորին հետաքրքրելի երեւույթ է, քանի որ այդ գրքերը դեռեւս տպարանից դուրս չեն եկել: Ի դեղ, որ այս տարի լույս պիտի տեսնի 62-ական դասագիրք 2 մլն 822 հազար ընդհանուր տպաքանակով»:

Ար. Մ.

ԳՐԱԿԱՆ

«Ես Մայա Պլիսեցկայան եմ»

ՄՈՍԿՎԱ, 24 ՕԳՈՍՏՈՍ, ԻՏԱՐ ՏԱՍՍ- Հանրահայտ պարուհու գրքի ներկայացմանն էր հրավիրել այսօր «Նովոստի» հրատարակչությունը:

Բալետի եզակի պարուհի եւ դերասանուհի Պլիսեցկայան, իրեն հատուկ տաղանդով, հուզականությամբ, անմիջականությամբ ու անկեղծությամբ գրում է ամենատարբեր բաներ մասին: Պարուհու կյանքում եղել են հաղթանակներ ամենահեղինակավոր միջազգային մրցույթներում, համերգային հաղթարշավներ, ամենաբարձր պարգեւներ եւ մրցանակներ: Բայց ոչ մի հաջողություն չփոխեց օտար նախանձից եւ խառնակությունից: Այդպիսին է այս աշխարհը: Եւ նա ստիպված էր պայքարել բեմում իր տեղի, դերերի համար, ինչի մասին անթաքույց դառնությամբ է պատմում գրքի հեղինակը:

Գրքի շատ էջեր դերասանուհին նվիրել է Մոսկվա թատրոնին, ծգտելով վերլուծել համաշխարհային ճանաչում նվաճած այդ կոլեկտիվում ընթացող բարդ գործընթացները:

Լուծել համաշխարհային ճանաչում նվաճած այդ կոլեկտիվում ընթացող

Գրքում զգալի տեղ է հատկացված հայտնի քաղաքական եւ հասարակական գործիչների, գրողների, նկարիչների, կոմպոզիտորների, թատրոնի վարպետների հետ հանդիպումներին: Գիրքը վկայում է Մայա Պլիսեցկայայի անկասկած գրական օժտվածության, հեղինակի համարձակ եւ ուրույն մտածողության մասին, որը հաճախ տեղվում է ընդհանուր ճանաչում գտած կարծիքից: Այն մեծապես օգնում է նաեւ հասկանալու այդ հոյակաղ պարուհու անձը, նրա բնավորությունն ու հայացքները: Գրքում զետեղված է 150 լուսանկար՝ ընտանեկան արխիվից:

Գիտնականի տանը կայացած գրքի ներկայացումը հաճելիորեն համընկավ բալետի առաջին միջազգային «Մայա» մրցույթի հետ, որն իենց նոր ավարտվեց Սանկտ Պետերբուրգում:

ԿԻՆՈ

Ֆիլմադարանի նոր կինոփառատոները

Սեպտեմբերին Հայաստանում Արտաշիսյան եղբայրների հետ մշակութային կապերի եւ համագործակցության հայկական ընկերության 50-ամյա հոբելյանի առթիվ տեղի կունենա համաշխարհային կինոյի վարպետների ֆիլմերի ցուցադրություն: Հոկտեմբերին կայանալիք գերմանական մշակույթի օրերին ֆիլմադարանը կներկայացնի գերմանացի կինոռեժիսոր Հերցոգի ֆիլմերը: Այդ ամսին նախատեսվում է անցկացնել նաեւ Յուրի Երզնկյանի ֆիլմերի հետահայաց ցուցադրումը:

Ինչպես տեղեկացրեց ֆիլմադարանի տնօրեն Գարեգին Զահրյանը, հոկտեմբեր-նոյեմբերին Վրաստան-Հայաստան վրացական կազմակերպության հետ համատեղ կկազմակերպվի նաեւ վրացական ֆիլմերի կինոփառատոն, որ կցուցադրվեն վերջին 4-5 տարիներին ստեղծված վրացական ֆիլմեր:

Այս առիթով Հայաստան կայցելի նաեւ վրացական կազմակերպության նախագահ՝ վրաց ճանաչված դերասանուհի Սոֆիկո Ճիաուրելին:

«Այս օրերին, երբ շատերն են բողոքում հայաստանյան կինոդահլիճներում ցածրարժեք ֆիլմերի ցուցադրությունից, ֆիլմադարանը աշխատանքային նորմալ պայմանների դեպքում կարող է ծառայել այդ բացը», ասաց ֆիլմադարանի տնօրենը:

ԼՈՒՍԻՆ ՏԱՊԱՆ

ԵՐԵՎԱՆ

Կվերականգնվի մանկավարժների հաստիքը

ԵՐԵՎԱՆ, 24 ՕԳՈՍՏՈՍ, ՓԱՍՏ- Մայրաքաղաքի տարբեր շրջանների գործադիր իշխանությունների կողմից վերջերս հարց է բարձրացվում ԲՇՏ կից մանկավարժների հաստիքների վերականգնման մասին, որը հնարավորություն կտա գոնե փոքր-ինչ վերահսկել դպրոցահասակ երեխաների առօրյան: Նախկինում այս մանկավարժների աշխատանքը որոշակիորեն օժանդակում էր եւ դպրոցների, եւ շրջանային խորհուրդների գործունեությանը: Սակայն ԲՇՏ կից մանկավարժների հաստիքի վերականգնման հարցի հետ, քաղաքային սպորտկոմիտեի կողմից առաջարկվեց ստեղծել նաեւ ֆիզկուլտ մեթոդիստների հաստիք, որոնք կգբաղվեն աճող սերնդի սպորտային դաստիարակությամբ: Երաղգործկոմի շենքերի եւ շինությունների շահագործման վարչության գլխավոր ինժեներ Սոս Այվազյանը նշեց, որ այս դեպքում դժվարանում է եւ առաջին, եւ երկրորդ հաստիքների լուծման հարցը, քանի որ ֆինանսական դժվարությունների պատճառով դժվար է միաժամանակ մանկավարժների երկու հաստիք ստեղծել: Այժմ վարչության կողմից մշակվում է նախագիծ, ըստ որի նախատեսվում է ստեղծել ԲՇՏ կից մանկավարժ մեթոդիստների հաստիք, որը միանգամից կբավարարի երկու պահանջները՝ կգբաղվի եւ երեխաների հանգստի կազմակերպմամբ, եւ նրանց սպորտային դաստիարակությամբ: Օրերս այդ որոշման նախագիծը կներկայացվի Երեւանի խորհրդի գործկոմի քննությանը:

digitised by A.R.A.R.@

ԱՐԱԳ, ԲԱՐՁՐ, ՈՒԺԵՂ

Հայաստանի ղեկավարությունը ՄՕԿ-ի հոբելյանական կոնգրեսի մասնակից

ՍՈՒՐԵՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ.
Փարիզ

Այս տարի լրանում է ժամանակակից օլիմպիական շարժման 100-ամյակը, որի հիմնադիրն է ֆրանսիացի ազնվական Պիեռ դե Կուբերտենը:

Այդ առթիվ Փարիզում տոնակատարության ճոխ ծրագիր է մշակված: ՄՕԿ-ի նախագահ Խուան Անտոնիո Սամարանչը հրավերներ է ուղարկել Միջազգային օլիմպիական կոմիտեի անդամ բոլոր երկրների երեսփոխան ներկայացուցիչների: Հայաստանից ղեկավար հյուրերի թվում են հանրապետության ազգային օլիմպիական կոմիտեի նոր նախագահ, Հայաստանի Հանրապետության սպորտվարչության պետ Ալեքսանդր Ավետիսյանը, ՀԱՕԿ-ի գլխավոր քարտուղար Հարություն Յավրյանը, որոնք Երևանից Փարիզ ժամանեցին ֆուտբոլի հավաքականի հետ նույն ուղերթով և ՀԱՕԿ-ի «Արդարացի խաղ» կոմիտեի նախագահ Աշոտ Մելիք-Շահնազարովը, որը Ֆրանսիա է ժամանելու Շվեյցարիայից: ՄՕԿ-ի 100-ամյակին նվիրված տոնակատարությունները անցկացվելու են օգոստոսի 26-ից սեպտեմբերի 6-ը: Այդ ընթացքում տեղի է ունենալու նաև ՄՕԿ-ի հոբելյանական կոնգրեսը:

Հիմնական միջոցառումներն անցկացվելու են Մորբոնի համալսարանում: Դեռևս Լիլլեհամմերում տեղի ունեցած ձմեռային օլիմպիական խաղերի ժամանակ ձեռք բերված նախնական պայմանավորվածությամբ Հայաստանի ՄՕԿ-ի ղեկավարությունը պետք է հանդիպի Ֆրանսիայի երիտասարդության և սպորտի նախարար տիկին Մուրի Էլիտի և ՄՕԿ-ի նախագահ պարոն Անրի Սերանդոնի հետ:



ՍԱՆԳԼԻԱ

Հայաստանն առագաստանավային սպորտի երկրների առաջին տասնյակում

ԵՐԵՎԱՆ, 25 ՕԳՈՍՏՈՍ, ՄՆԱՐԵ: Հայաստանի 4 դպրոցական առագաստանավորդներ՝ 17-ամյա Գարուշ Դանիելյանը, 16-ամյա Հայկ Աբգարյանը, Սասսիկ Նազարյանը և Արմեն Մարտիրոսյանը առաջին անգամ մասնակցեցին հասմանդամ մարզիկների աշխարհի առաջնությանը:

Հետաքրքիր էր անգլիական Ռուլյանդ լճի վրա հետևել Անգլիայի, ԱՄՆ-ի, Ավստրալիայի, Իսպանիայի, Հոլանդիայի, Շվեդիայի և այլ երկրների 20 անձնակազմերի դայֆարին, ասաց Հայաստանի թիմի ղեկ Կարեն Բալայանը: Հայ դպրոցական առագաստանավորդները, որոնք ներկայացնում էին «Փյունիկ» մարզական ընկերակցությունը, աննկնկալ բարելավում էին իրենց մրցաշարային վիճակը, իսկ վերջին 10-րդ մրցավազքում եզրագծին հասան ամենից շատ դրանով մտնելով մասնակից երկրների առաջին տասնյակի մեջ:

Սակայն Բալայանի կարծիքով, ամենագլխավորն այն է, որ մեծ ռեգատայի նորեկները դարձան հանուրի սիրելիներ: Այսպես, ամերիկացի առագաստանավորդներից մեկը, ի դպրոցի խիզախ դեկակալ Գարուշ Դանիելյանի, որոշեց նրա անունով կոչել իր դրոշը, իսկ Արմեն Մարտիրոսյանի 16-ամյակի օրը նրան մատուցվեց տոնական տորթ, և մրցումների բոլոր մասնակիցները երգեցին «Ծնունդդ շնորհավոր» անգլիական երգը:

Հայաստանի թիմի մարզիչ Սամվել Ռոստոմյանի կարծիքով, իր սաները կարող էին ավելի բարձր տեղ գրավել, սակայն զգացվում էր մարզիչների անվստահությունը: Այդուհանդերձ, մրցումների հանդիսավոր փակման ժամանակ Հայաստանի հավաքականը միահամուռ կերպով ճանաչվեց առաջնության ամենաժողովրդական և համակրելի թիմ:

ՀԵՏԱՔՐՔՐՍԿԱՆ

«Շան միս չենք ուտում»

ԳՐԻԳՈՐ ԱՍՏՐԻՅԱՆ.
Վալանս, Ֆրանսիա

Ինչպես հայտնի է, կորեացիները եւ Արեւելյան Ասիայի այլ ազգեր ճանաչված են նրանով, որ շան միս են ուտում: 1988 թ. Սեուլի օլիմպիական խաղերում հյուրերի վրա վաս տպավորություն չթողնելու համար հարավկորեացիները վերջ դրեցին իրենց այս ավանդական խոհանոցային սովորություններին: Բայց ըստ որոշ աղբյուրների, շան միս ուտելը կրկին վերածվում է ազգային սովորության: Հարավային Կորեայի ֆուտբոլի ֆեդերացիայի փոխնախագահը բուռն ծեւով հերքեց լուրերը. «Ճիշտ է, որ Կորեայում դեռեւս պահպանվում է ավանդական սովորությունը, բայց շան միս ուտողների թիվը շատ փոքր է: Մենք նրանց համարում ենք վայրենիներ: Կարող եք չվախենալ, մեր խաղացողները շան միս չեն ուտում», ասաց փոխնախագահը: Արաբները, որ երբեք չեն սիրում շներին, մի փոքր հանգստացան հարավկորեացի ֆուտբոլիստների ադրեւակերությունից:

ՇԵՄՊԻՈՆՆԵՐԻ ԼԻԳԱ

Կազմը ճշտվեց

Նախնական խաղերի դպրոցական հանդիպումներից հետո լիովին պարզ դարձավ ֆուտբոլային ակումբների կազմը, որոնք հանդես կգան չեմպիոնների լիգայում: Կիեւի «Դինամո» սեփական դաշտում հաղթեց դանիական «Միլկեբորգին»՝ 3-1 (առաջին խաղը՝ 0-0): Դաշտի տերերից այլի ընկան Սկաչենկոն, Կովալեցը եւ Կոսովսկին, իսկ հյուրերից՝ Ֆերնանդեսը: «Պարի սեն ժերմենը» առաջին խաղում Փարիզում հաղթելով 3-0 հաշվով, հունգարական ՎԱՏ ակումբին, հաղթեց նաեւ Բուդապեշտում՝ 2-1: Հյուրերից երկու գոլի հեղինակ դարձավ կամերունցի Մբոլան, դաշտի տերերից՝ Ֆյուլեն: «Գալաթասարայը» Անկարայում կրկին ջախջախիչ պարտության մատնեց Լյուխսեմբուրգի «Ավենիրին» (Բեգեն)՝ 4-0 (5-1): Այստեղ հետ տրիկի հեղինակ դարձավ Շուքուրը, եւս մեկ գնդակ խփեց Սանյակլին: Շվեդական «Գյոթեբորգը» տանը ռեւանշի հասավ չեխական «Սպարտայի» նկատմամբ (2-0), առաջին խաղում պարտության դիմաց (0-1): Գոլերը խփեցին Բլոմկվիստը եւ Ռենը: Ղալաթուրգում ավստրիական «Կազինոն» կրկին հաղթեց Իրայելի «Մակաբիին»՝ 3-1 (2-1): Դաշտի տերերից գնդակները խփեցին խորվաթ Սլադենովիլը (2) եւ Յուրյեւիլը, իսկ հյուրերից՝ Խացանը: Հունական ԱԵԿ-ը հեռագա պայքարից դուրս մղեց Շոտլանդիայի «Գլազգո Ռեյնջերսին», տանը առաջին խաղում հաղթելով 2-0, նա հաղթեց նաեւ հյուրընկալվելիս՝ 1-0: Միակ գոլը խփեց Սավելսկին: Խորվաթական «Հայդուկը» հաղթեց Վարշավայի «Լեգիային»՝ 4-0 (1-0): «Սպյուռնան» Բուխարեստում խոշոր հաշվով հաղթելով Շվեյցարիայի «Սերվեթին»՝ 4-1, ժնեւում բավարարվեց ոչ-ոքով՝ 1-1: Այսպիսով չեմպիոնների լիգայում հանդես կգան հետեւյալ ակումբները. A խումբ. «Գալաթասարայ», «Մանչեստր Յունայթեդ», «Գյոթեբորգ», «Բարսելոն»: B խումբ. «Բավարիա», «Դինամո» (Կիեւ), «Սպարտակ» (Մոսկվա), «Պարի Սեն ժերմեն»: C խումբ. «Սպյուռնա», «Հայդուկ», «Բենֆիկա», «Անդերլեխտ»: D խումբ. «Միլան», «Կազինո», ԱԵԿ, «Այաքս»: Մրցաշարը կանցկացվի երկու շրջանով եւ հաստատ եզրափակիչ կմտնեն ամեն խմբից երկու լավագույն ակումբները:

LEVON TRAVEL

Եւրոպա-96 լուսաբանվում է «Լեւոն Թրավելի» աջակցությամբ

Ներկայացնում ենք Հայաստանի հավաքականի մրցակիցներին

Ինչպես գիտեք, սեպտեմբերի 7-ին, Բրյուսելում, Հայաստանի ֆուտբոլի ազգային հավաքականը Եւրոպայի առաջնության ընտրական փուլի անդրանիկ խաղում մրցելու է Բելգիայի հավաքականի հետ: Այսօրվանից սկսած ընթերցողների ուշադրությանն ենք ներկայացնում մեր ահեղ մրցակցի խաղացողներին.

Միշել Պրյուդ Հոմ

Միշել Պրյուդ Հոմ («Բենֆիկա» Պորտուգալիա)՝ դարպասապահ, ծնվել է 1959 թ. հունվարի 24-ին, Ուգրե քաղաքում: Հասակն է 184 սմ, քաշը՝ 79 կգ: Նախկինում հանդես է եկել «Ստանդարս» Լիեժ (1969-1986), «Մեխելեն» (1986-1994) թիմերում: Ազգային հավաքականի կազմում մասնակցել է 55 միջազգային հանդիպումների: Առաջին անգամ ազգային հավաքականի համազգեստը հագել է (02.05.1979) Ավստրիա-Բելգիա (0-0) եւրոպայի առաջնության խաղում: Երիտասարդական հավաքականի (մինչեւ 21 տարեկան) կազմում անցկացրել է 8 խաղ: 1987 եւ 1989 թթ. արժանացել է «Ոսկե խաղակոշիկ» մրցանակին: Մասնակցել է Իտալիա 90 եւ ԱՄՆ 94 աշխարհի առաջնություններին:

Ֆիլիպ դե Վայդ

Ֆիլիպ դե Վայդ («Անդերլեխտ»)՝ դարպասապահ, ծնվել է 1964 թ. հուլիսի 5-ին, Զելե քաղաքում: Հասակն է 181 սմ, քաշը՝ 78 կգ: Նախկինում հանդես է եկել «Բեւերենում» (1982-1987): Պատանեկան հավաքականի (մինչեւ 18 տարեկան) կազմում անցկացրել է 2 խաղ, երիտասարդական հավաքականի կազմում՝ 5 խաղ: Ազգային հավաքականի կազմում մասնակցել է 4 միջազգային հանդիպումների, որոնցից առաջինը Բելգիա-Դանիա (3-0) ընկերական հանդիպումն էր (23.08.1989): Մասնակցել է Իտալիա 90 եւ ԱՄՆ 94 Աշխարհի առաջնություններին:

Դենի Վերլինդեն

Դենի Վերլինդեն («Բրյուգե»)՝ դարպասապահ, ծնվել է 1963 թ. օգոստոսի 15-ին, Աարսկոտ քաղաքում: Հասակն է 174 սմ, քաշը՝ 79 կգ: Նախկինում հանդես է եկել՝ «Ուրդենբերգում» (1974-1976), «Լիրսում» (1976-1988): Պատանեկան հավաքականի կազմում անցկացրել է 34 խաղ, երիտասարդական հավաքականում՝ 10 խաղ, ազգային հավաքականի կազմում դեռեւս ոչ մի հանդիպում չի անցկացրել: Մասնակցել է ԱՄՆ 94 Աշխարհի առաջնությանը

ՄԱՐՄՆԱՄԱՐԶՈՒԹՅՈՒՆ

Հարություն Գարգալոյանին նվիրված հուշամրցաշար

Չորսօրյա դայֆարից հետո երեկ երեւանում ավարտվեց հայկական մարմնամարզության դպրոցի ստեղծման երախտավոր Հարություն Գարգալոյանին նվիրված սպորտային մարմնամարզության հուշամրցաշարը: Այն միաժամանակ համարվում էր հանրապետության բաց առաջնություն: Թեեւ մրցաշարին մասնակցելու հրավեր էին ստացել բոլոր քաղաքների եւ շրջանների մարզադպրոցները, սակայն հիմնականում իրենց մասնակցությունը բերեցին մայրաքաղաքի դպրոցների մարմնամարզիկների օլիմպիական հերթափոխի երկու դպրոցները, վանաձորցիները, արտաշատցիները ու էջմիածնցիները: Սպորտի վարդեսների ծրագրով հանդես եկող մարզիկների մեջ, բնական է, հիմնականում դպրոցական էր: Հիմնականում դպրոցական էր նաեւ հանդիսատեսի հանդիսավոր մասը: Ի վերջո, 106,5 միավորով առաջին տեղը նվաճեց դպրոցի մարմնամարզիկների դպրոցի տան Լեւոն Կարախանյանը: Միավորների փոքր տարբերությամբ 2-րդ մրցանակակիր դարձավ նույն դպրոցի տան Վարդան Սարգսյանը: Երրորդությունը բաժին մարզադպրոցի տան Արմեն Մկրտչյանը եղավ: Նրանց հաջողություններում, ինչ խոսք, մասն ունեն մարզիչներ Հմայակ Կարապետյանը, Աշոտ Սարգսյանը եւ Ալեքսան Գաբրիելյանը:

Աղջիկների մրցադայֆարում մրցանակակիրներ դարձան Արմսյա Գրիգորյանը, վարդեսների ծրագրով առաջին կարգայիններից Լուսինե Աղրեսյանը, երկրորդ կարգայիններից Դիանա Սարգսյանը:

«Մրցաշարը ցույց տվեց, ասում է Հրանտ Շահինյանը, որ աճում է մարմնամարզիկների մի նոր սերունդ, որն արժանիորեն կփոխարինի մեր ավագներին: Դպրոցից կարելի է հիշատակել Պավել Սարգսյանին, Վահագն Ստեփանյանին, Արթուր Զաքարյանին եւ ուրիշներին»:

Մարզիկները վարդեսություն են ձեռք բերում մեծ մրցումներում: Ափսոս, որ մեր սաները հնարավորություն չունեն ավելի հաճախակի մասնակից լինելու միջազգային մրցաշարերին:

ԴԵՐԵՆԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ.

digitised by A.R.A.R.@

ԱՀԿ

Օրվա հետքերով

ԿԱՊԵՐ

ԱՊՀ մասային միության կազմումը կխանգարի ինքնուրույն կառերին

ՄՈՍԿՎԱ, 24 ՕԳՈՍՏՈՍ, ԻՏԱՐՏԱՍՍ-ԱՐՍՆՊՐԵՍ: ԱՊՀ մասնակից ոլորտությունների շրջանակներում մասային միության կազմումը ոչեմ է դառնա տնտեսական դաշինքի ստեղծման ոլորմանագրի կատարման կարեւոր փուլերից մեկը: Դա կեղծաբի միասնացման ամրապնդմանը եւ ԱՊՀ երկրների միջեւ խախտված արտադրական կապերի վերականգնմանը, այսօր ասաց Ռուսաստանի արտաքին տնտեսական կապերի նախարար Օլեգ Դավիդովը:

Լիարժեք մասային միություն ստեղծելով, մասնակից երկրները ոչեմ է ստանձնեն մի շարք լուրջ պարտավորություններ: Միությունը նախ եւ առաջ ենթադրում է տարածաշրջանի միասնություն, արտաքին տնտեսական կապերի կարեւոր բնագավառներում ազգային կարգավորումից լիակատար հրաժարում եւ վերազգային կառույցներին համապատասխան պարտականությունների հանձնում, համաձայնագրի մասնակիցների ամբողջ տարածքում ընդունվող որոշումների անվերապահ կատարում, ընդգծեց նախարարը:

Ըստ այդմ Ռուսաստանը, ինչպես նաեւ մասային միության մասնակից մյուս հանրապետությունները կզրկվեն ինքնուրույն որոշումների ընդունման իրավունքից այնպիսի բնագավառներում, ինչպիսիք են տակագնային եւ ոչ տակագնային կարգավորումը, առեւտրատնտեսական համագործակցության եւ համապատասխան պայմանագրերի կնքման բազմակողմ բանակցությունների վարումը, արժութային կարգավորումը եւ վերահսկողությունը, նույնիսկ եթե դա վերաբերի միայն Ռուսաստանի շահերին, նշեց Օլեգ Դավիդովը:

Սակայն ամենի համար պարտադիր որոշումներ ոչեմ է ընդունվեն հաշվի առնելով մասնակիցների «տնտեսական կշիռը»: Այս կապակցությամբ Օլեգ Դավիդովն կարծիք, «երկիր-ինն» կամ «ընդհանուր հանձնաժողով» սկզբունքները Ռուսաստանի համար միանգամայն անընդունելի են:

Օլեգ Դավիդովն ասաց, որ հավանաբար մասային միության կազմավորումը տեղի կունենա երկու փուլով: Առաջինը ներառում է մասային միության ստեղծման կարեւոր սկզբունքներին առնչվող համաձայնությունների առաջադրումը, տնտեսության միասնականացումը եւ արտաքին տնտեսական կապերի կարգավորման միանման համակարգերի ստեղծումը:

Երկրորդ փուլը մասնակից ոլորտությունների մասային տարածքների միաձուլումն է, գործող միջազգային պայմանագրերի միջազգային իրավունքի սուբյեկտ եւ իրավաժառանգորդ լինելու հարցի լուծումը, մասային միության կառավարման վերազգային մեխանիզմների ստեղծումը եւ դրանց համապատասխան պարտականությունների լրիվ հանձնումը, միաժամանակ դրանք դուրս բերելով ազգային իրավասության ոլորտից:

Մասային միության հաջող եւ արագ ստեղծման համար չպիտանաց կարեւոր կլինի առաջին փուլի անցումը, որը կդահանջի տեխնիկական մեծ աշխատանք եւ միաժամանակ կցուցադրի ԱՊՀ մեր գործընկերների մտադրությունների լրջությունը, ընդգծեց նախարարը: Ընդսմին հնարավոր է, որ առանձին հանրապետություններ դեռեւ մասային միությունն շարժվեն տարբեր «արագություններով», նայած Ռուսաստանի հետ իրական միասնացման պատրաստակամության աստիճանի:

«ԵՎԱ»

ուսումնական կենտրոնը հրավիրում է Ձեզ

Սովորելու 1-3-ամսյա դասընթացներում հետեւյալ մասնագիտությունների գծով.

- օդերաստրական գործ, ծրագրային փաթեթների եւ ծրագրավորման լեզուների ուսուցում IBM PC համակարգիչների վրա
- անգլերեն լեզու սկսնակների համար Communicative course in English, Learning American English, The Cambrige English course (2 դիկլով), ամերիկյան ուսումնական հաստատություններ ընդունվողների համար TOETL
- բանկային գործ
- հաշվապահություն եւ համակարգիչների կիրառումը հաշվապահության մեջ
- կոսմետիկա եւ էսթետիկա
- մերսում (մասաժ)

Դասընթացներն ավարտողներին տրվում են վկայականներ (սերտիֆիկատ) հայերեն, ռուսերեն, անգլերեն լեզուներով:

Մենք երաշխավորում ենք ոչ միայն ուսուցման բարձր մակարդակ, այլեւ հարմարավետ դասասենյակներ Բաղրամի կենտրոնում:

Ընդունում ենք ամեն օր, բացի շաբաթ եւ կիրակի օրերից, ժամը 11-ից 16-ը:

Հասցեն՝ Սարյան փող., 4 Մ. Սարյանի տուն-թանգարանի դիմաց)
Հեռախոս 58-21-22

ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

A STYLE

ORIGINAL DESIGN

ՕԳՏՎԵՔ ՄԵՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ. ՄԵՆՔ ՊԱՏՐԱՍՏ ԵՆՔ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԵԼ

Մեր հասցեն՝ Երեւան, Հանրապետության 47, Հեռախոս՝ 581841

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հայկական բաց համալսարանը /ՀԲՀ/ սկսում է 1994-95 ուս. տարվա ընդունելությունը նախադպրոցական բաժանմունքում:

Նախադպրոցական բաժանմունքում երեխաներին դասավանդվում են ինչպես ՀԲՀ, այնպես էլ այլ բուհեր ընդունվելու համար:

Բաժանմունքի ունկնդիրները կարող են ուսումնասիրել հետեւյալ առարկաները «գեղարվեստական մոդելավորում» մասնագիտությամբ. գծանկարչություն, կոմպոզիցիայի հիմունքներ, հատուկ կոմպոզիցիա, հայոց լեզու եւ գրականություն:

«միջազգային իրավագիտություն», «միջազգային ժուռնալիստիկա», «օտար լեզուներ եւ հաղորդագիտություն», հայոց լեզու եւ գրականություն, հայոց պատմություն, անգլերեն լեզու:

«մենեջմենթ եւ ֆինանսա-բանկային գործ» մասնագիտությամբ. մաթեմատիկա, հայոց պատմություն, հայոց լեզու եւ գրականություն:

Բացի նշվածից կկազմակերպվեն խմբեր հետեւյալ առարկաների գծով՝ ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն, ռուսաց-գերմանական /անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն/ եւ արեւելյան լեզուներ /արաբերեն, պարսկերեն/:

Նախադպրոցական բաժանմունք կարող են ընդունվել դպրոցների, ուսումնարանների, տեխնիկումների ավարտական դասարանների /կուրսերի/ աշակերտները /ուսանողները/, ինչպես նաեւ լրիվ միջնակարգ կամ բարձրագույն կրթություն ունեցող անձինք:

Ընդունելությունը կտեւի մինչեւ սեպտեմբերի վերջը: Դասերը կսկսվեն հոկտեմբերի 1-ից: Ուսումնական տարվա վերջում կանցկացվեն ավարտական քննություններ, որոնք հաջողությամբ հանձնելու դեպքում ունկնդիրները կընդունվեն ՀԲՀ:

Դիպլոմները պետք է ներկայացնեն հետեւյալ փաստաթղթերը. ա) դիպլոմ, բ) 2 լուսանկար /3×4/, գ) կրթության վկայականի պատճեն կամ տեղեկանք դպրոցից /աշակերտները/: Փաստաթղթերը ընդունվում են ամեն օր, բացի կիրակի օրերից, ժամը 15-19-ը:

Մեր հասցեն է՝ Երեւան, Մոսկովյան 17, Պուշկինի անվ. դպրոց, 3-րդ հարկ, նախադպրոցական բաժանմունքի ընդունող հանձնաժողով:

Տեղեկությունների համար զանգահարել 58-08-01, 58-79-54, 52-39-71 հեռախոսներով:

ՆՈՐԱՁԵՎՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԵՍ

ԿԱՐԻՆԵ

Հայ մամուլի տարածման կենտրոնական գործակալությունը հայտնում է, որ գործակալության կրպակներում վաճառվում է «ԿԱՐԻՆԵ» նորաձեւության հանդեսի երկրորդ համարը:

ԿԻՆԸ ԾՆՎԵԼ Է ՀԱՅԵԼԻՆ ՁԵՌՔԻՆ

A STYLE

ARMENTRUST

ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ



ՀԱՅԱՍՏԱՆ
ԵՐԵՒԱՆ
ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ 27
ՀԵՌ. 58 67 18, 58 67 19
ՖԱՔՍ. (007 8852)56 11 84

HYIMEXTOUR

m.v. "F.Shalyapin"

«Քսիմեքստուր-Երեւան» ֆիրման հրավիրում է հրապուրիչ ճանապարհորդության «Ֆյոդոր Շալյապին» հարմարավետ ջերմանավով՝

12.09-25.09
Օդեսա - Նեապոլ - Մալթա - Պիրեյ - Ստամբուլ - Օդեսա

26.09-01.10
Օդեսա - Պիրեյ - Ստամբուլ - Օդեսա

«Քսիմեքստուր-Երեւան» ֆիրման և նավի անձնակազմը կապահովեն Ձեր լիարժեք հանգիստը և բարձրակարգ սպասարկումը շրջագայության ընթացքում:

Մեր հասցեն՝ Կորյունի փ., 5 Հեռ. 52-39-08, 52-31-44

ԱՐԱՄ

«Գարեգին» հրատարակչության տպարան. Երեւան 23 Արամյանների 2 Գրանցման թիվ 65. Դասալ 69149. Պատվեր 1831 Տպաքանակը՝ 5000 Ստորագրված է տպագրության՝ 25.08.1994 Գինը՝ 10 դրամ

digitised by A.R.A.R.@